ՍՈՓԵՐՔ

ՀԱՑԿԱԿԱՆՔ

Ը.

ԹԱԴԷՈՍ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՏ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ

Ս. ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ ՍԱՆԴԽՏՈՅ ԿՈՒՍԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

1853

Քեզ պարծի այսօր սուրբ եկեղեցի, ո՞վ վիշ-
ուհի սուրբ Սանդուխտ, որ զՀայրականն քո թողեր
զպաշտօն, վասն Քրիստոսի հեղեր զարիւն քո սուրբ։

Աշակերտեցար առաքելոյն Թադէոսի, և 'ի հա-
ւատս Աշմարիտս հաստատեցար, ոչ խառնակելով
ընդ հեթանոսական պաշտօնսն, արժանի եղեր վերա-
նալ առ Հայր։

Որ զտիկնութեանն քո թողեր զփառս, և ա-
ռաւուծային փառաց զարդարեցար. այսօր դաս-
կցեալ ընդ զուարթունս երկնից. վասն մեր առ սի-
բարեխօսեա։

ՀԱՐԱԿԱՆ

Ա. Զ Դ.

Գեղեցկահիւս և փափկախօս վը-
կայաբանութիւնս կանուխ արու-
սեկի որ'ի Քրիստոս Լուսոյն Հայոց,
Ս. ԹԱԴԷՈՍ առաքելոյ, և արփիաւո-
րելոյն 'ի նմանէ ջքնաղափայլ աս-
պետական, արքածին օրիորդին ա-
սեմ ՍՍՆԴԽՏՈՑ կուսին, զոր գոյ
մեզ կարծել և պարծել իբրեւ նախ-
ընծայ պատարագ 'ի դատերաց մօրս
հոգեւորի եկեղեցւոյ սրբոյ՝ 'ի
սէր Աստուածն փեսայի ողջակիզա-
բար նուիրելոց, 'ի բարձրաւանդա-
կումն անդ բազմահրաշ այրարա-
տեան բազնի զոհից առաջնոց՝ Ա-
դամայ, Աբելի և Նոյի. ընծայեալ
առաջին 'ի լոյս յ'Ը հատոր Սոփե-

ըացս , ոյց առաւել սեփականագոյն
և զբօսանս և նախանձ մատուցէ ,
թէ ոչ արդեաք Սանդխտոյ նմա-
նեացն՝ բնութեամբ և հատակաւ ,
որոց պահեալ էն խնամք ատաուա-
ծային՝ զմայրութիւն ազգի : Մա-
նաւանդ զի և պաշտօն նորին յամաց
հետէ հռչակաւ հնչի 'ի վարժոցս
աղջկանց . որոց հարկ ուրեմն է յոր-
դորագոյն եւս 'ի նոյն եղանիլ՝ ըն-
թերցանութեամբ հանդիսից նահա-
տակութեան ցանկալւոյն և անմոռ-
նոյ Պաշտպանին իւրեանց . որում
և էլ վիճակ զուգաժամանակ 'ի
տնօրէնութեան մարդացելոյն վան-
մեր Աստուծոյ՝ կեալ յերկրի , և
յետ նորա էլեցն՝ նախահրաւէր 'ի
կուսական գաստուց ճեպել առ նոյն
յառագաստն գերազանցիկ գրդա-
ռանացն Եւայ , 'ի յաւերժ հարս-
նութիւն Սիրոյն յաւիտենից :

Ոչ յետ բազմաց զկնի եղեց սըրբոցս կարծեմք գրեալ և զվկայաբանութիւնս յաշակերտաց Թադէի, և 'ի սկիզբն ոսկեակ գարու մերոյս թարգմանութեան՝ փոխաբերեալ 'ի հայ գիր և բան, որոյ և թարգմանն յիշատակի յաւարտ Ճառին և 'ի ծանօթութիւնս յիշեացի և առ 'ի մէնջ 'ի վերջ մատենիանս։ Իսկ գաղափար Սոփերիս և որ զկնի համառօտ պատմութեանն Սանդխատոյ՝ յերկաթագիր Տօնականէս մերմէ է, յ'ԺԲ գարու գրելոյ, համեմատեալ ուրեք և ընդ այլում օրինակի գրելոյ 'ի ԺԴ գարու։ Իսկ այլքն 'ի պատմութեանց՝ յայլոց ուստեք յընտիր գրչագրաց հաւաքեցան։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԹԱԳԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ՓԱՐՈՉՈՒԹԵԱՆՆ ԵՒ ԳԱԼԱՏԵԱՆ Ի ՀԱՅՍ

ԵՒ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ

ԲԱՋՄԱԴԻՄՈՒ *Են* Ճանապարհք աստուածային լուսեղէն վտակացն, և ոռոգի դիտարարգունդ 1 բաժանկքն վասն զի մաքրական 2 ընթացիւքն վառին 'ի հանդիպումն անշէջ լապտերին, և հատանեն սիրական խորհրդին, և միակամ կամքն փարին 'ի ծայրագոյնսն, մինչեւ առնուն զհայցումն ջերմեռանդն գթոյն։ Եւ փութան հատանել կամողին, և առնուն զմեռատանելորդմասն վատատակոց, սկսեալ յառաջնոցն մինչեւ 'ի ստան և միակն, ըստ

աւետարանական բանին. զի հան-
դիպին լուսաբեր ցօղոյն, ուստի
բղխեն զքաղցրահամբոյր սերն, 'ի
խաղս անուշարար կուսութեանցն
աստուածազարդ վարուցն։ Եւ
ընուն շահեմարանք նոցա 'ի բղխմանէ
աղօթական և արտօսրագործ 3 վաս-
տակոցն. զի յամենայն ժամ են
փառաւորիչք սրբոյ Երրորդու-
թեանն. և փայլեն իբրեւ զճառա-
գայթս արեգական սիրական խոր-
հրդովք, և տան պատուղ սուրբ
հանդիսին, և մատուցանեն ընծայ
'ի հոտ անոյշ որ առաջի աստուած-
որդւոյն, և հաճոյակատար 4 կա-
մաք առնուն զպարգեւս անմահա-
կան լուսոյն, և գրին 'ի լուսեղէն
բանական 'ի հրեշտակամբոխս 5 զօրսն.
և լինին թեւազգեցիկք 'ի սրովբէա-
գոչ դասն, և ընուն երկնաւոր
ցանկութեամբքն լիապէս։

Արդ ոչք հանդիսական՝ հանդի-
պին ըստ վերագրելոցն՝ որպէս և
հիւսիսային կողմանցս ծագեաց
աստղն վարսագիտակ՝ 6 այրն սքան-
չելագործ, սուրբ առաքեալն Թա-

դէոս. և վիճակեաց զնմա Հայաստան ազգս. զի նա էր քարոզ բանին կենաց, և յառաջընծայ 'ի հանդէս մարտիրոսական պսակին 7։ Նա եկեալ ձայնէր զամենեսեան յերկնաւոր ընթրիսն. զի առաքեցաւ յամենափրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, յեռ համբառնալոյ տեառն յերկինս. և եդեալ զսուրբ աջն իւր 'ի վերայ առաքելոցն փըչեաց 'ի նոսա զմխիթարական սուրբ Հոգին զլոյսն Աշմարտութեան, և օրհնեաց զնոսա, և քաջալերեալ զնոսա լուսեղէն բանիւն, և առաքեաց զնոսա յիւրաքանչիւր վիճակս քարոզել զբանն կենաց։ Իսկ այս սուրբ առաքեալս էր լցեալ լուսեղէն խորհրդով, վիճակեալ Հայաստան ազգիս. գայր հասանէր 'ի Մինջադեռս Ասորւոց, քարոզէր ըզբանն կենաց, առնէր նշանս և սքանչելիս մեծամեծս։ Եւ դարձեալ անսի յառաջ գայր հասանէր 'ի քաղաքն Ուռհայ. և մնեալ 'ի տուն Տուբիայ բժշկէր զամենայն ախտս և զհիւանդութիւնս, և լուսաւորէր զնոսա երկնային լուսովն։

Եւ լուեալ Թագաւորին Աբգարու զսրբոյ առաքելոյն Թադէոսէ, և զքանչելիսն 8 զոր առնէր, կարծելով խմացաւ թէ նա է որ առաքեցաւ 'ի Քրիստոսէ 9 : Եւ ապա եկեալ սուրբ առաքեալն 'ի տուն Թագաւորին Աբգարու, և տեսեալ Աբգարու զսուրբ առաքեալն Թադէոս, և նշան երկնաւոր լուսոյն 'ի վերայ երեսաց նորա, զահի հարեալ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, և երկիր եպագ նմա. և մատուցեալ սուրբ առաքեալն եդ ձեռն 'ի վերայ նորա, և բժշկեաց զնա անուամբ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, և լուսաւորեաց զնա երկնային լուսովն, և զամենայն տուն նորա : Բժշկեաց և զԱբդիսու որդի Աբգեայ 'ի չար ցաւոց, որ էր այր մեծ և երեւելի 'ի դրան Թագաւորին : Եւ լուսաւորեաց զամենայն քաղաքն, և թողոյր անդ յաշակերտաց իւրոց : Եւ ինքն իսկ Թագաւորն Աբգար որ բժշկեցաւ 'ի սրբոյ առաքելոյն, եղեւ քարոզ բանին կենաց, և նշանագործ յա-

մենայն 10 բարիս . և օրհնէր սուրբ առաքեալն զԹագաւորն և զամենայն հաւատացեալսն :

Եւ ինքն սուրբ առաքեալն առնոյր զաշակերտսն և փութով հասանէր յաշխարհն Հայոց , առ Թագաւորն Սանատրուկ , 'ի գաւառին Սրատազ , 'ի քաղաքագեղն Շաւարշան , յապարանս արքունի , որ էին հովոց գեղինք Թագաւորացն Հայոց : Եւ քարոզէր անդ զբանն կենաց , և առնէր նշանագործութիւն 'ի դրան արքունի 'ի համաշխարհազարդ 11 բանական . և բժշկէր զամենայն ախտս չար հիւանդութեանց : Եւ եկեալք բազումք յարքունական դրանէն առ սուրբ առաքեալն , լսէին 'ի նմանէ զքաղցրաբարբառ քարոզութիւն աւետարանին . և տեսանէին զնշանսն , զի զբորոտս սրբէր , զկաղս գնացուցանէր , զդեւս հանէր , և զամենայն ախտս չարաչարս առողջացուցանէր : Եւ տեսեալ զամենայն սքանչելիս բազումք հաւատացին 'ի Քրիստոս :

Յայնժամ եկեալ գուստր թագաւորին, որում անուն էր Սանդուխտ, որ էր 'ի տխոց տղայ, զեղեցիկ տեսլեամբ և վայելուչ երեսաք, որ ոչ գտանէր համեմատ նմա 'ի վերայ երկրի. և հասեալ 'ի գիշերի առ սուրբ առաքեալն լսէր 'ի նմանէ զբանն քարոզութեան աւետարանին, և զձայն երկնաւոր զօրացն, և ընդունէր, և անկանէր առաջի սուրբ ոտից նորա, և արտասուօք համբուրէր, և ուսանէր 'ի նմանէ զբազում աւուրս. եւ ոչ թողոյր զնա զտիւ և զգիշեր, և այնպէս միացեալ բեւեռէր 'ի սէրն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ տեսեալ սուրբ առաքելոյն զջերմեռանդն գութ սիրոյ նորա առ Քրիստոս, առեալ մկրտէր զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ եղեւ նշան լուսեղէն յերկնից 'ի վերայ սրբոյ կուսին, և 'ի մէջ լուսոյն ձայն երկնաւոր զուարթնոցն. բազում և այլք հաւատացին 'ի ժամուն 'ի Քրիստոս. և տեսեալ քրմաժողով դիւցակատար պաշտօ-

նէին, պատմեցին խատերախ և անօրէն Թադաւորին իւրեանց Սանատրուկոյ։

Ապա չարաղինեալ Թադաւորն, տայր հրաման արամահ առնել ըզհաւատացեալսն։ Եւ եղեւ նշան յերկնից 'ի վերայ նոցա, և բազումք հաւատացին 'ի Քրիստոս, և անկաւ ահ 'ի վերայ ամենեցուն. և բազումք կորեան 'ի նոցանէ յահէ լուսոյ Հառագայթիցն. և ոչ իշխեցին ձեռն արկանել 'ի սուրբ առաքեալն։ Եւ երեւեալ փրկիչն ասէ. Պինդ կաց Թադէոս, զի ես ընդքեզ եմ 'ի փրկել զքեզ։ Եւ ասեալ սրբոյն Թադէոսի զփրկիչն Քրիստոս՝ անկանէր առաջի նորա հանգերձ արտասուօք, և ասէր. Տէր իմ և Աստուած, մի թողուր զիս միայն, զի ահա իբրեւ էկի 'ի բարբարոս ազգս 'ի դուռն Թագաւորիս հրամանաւ և զօրութեամբ քով. դու իսկ ասացեր, տէր իմ, երթայք ընդ ամենայն երկիր և քարոզեցէք զբանն կենաց. որ հաւատայ և մկրտի ապրեսցի, և որ ոչն հաւա-

ասց գառապարանոցն։ արդ երբեմն
եկի ես այսր և սկսայ քարոզել ըն-
բանս սուրբ աւետարանին քո զոր
եգեր ՝ի բերանի իմում՝ և ոչ կամին
լսել՝ զի որք հաւատացին ՝ի քեզ
ասէր, արամահ արարեալ ապանին, և
զոմանս բրազոհ արարեալ եգին ՝ի
բանդի։ կամէին և յիս ձեռն արկա-
նել։ իսկ լոյս սուրբ առաւածու-
թեան քո փութացեալ ընկղմեաց
զնոսա ՝ի խորս արամութեան ջա-
րին, և գանեալք ստակեցան ջար
մահուամբ, և ոչ կարացին հանդի-
պել ինձ։ Եւ ասէ ասէր։ Արի և ե-
լեր եաց գոցս և համբերեա զի բա-
զում՝ նեղութիւնք հասանեն քեզ,
զի ոչ են ընդունելոց զքարոզու-
թիւն աւետարանի իմոյ ասա։ բայց
՝ի բազմաց ստակաւ ժողովուրդ։ և
ես պահեցից զնոսա, և առից զնո-
սա առ իս։ և որք կատարեցան
վասն անուան իմոյ, ասց նոցա տե-
զի ՝ի սան հոր իմոյ։ Ասէ Թադէոս
ցասէր։ Եւ ես փութամ՝ հասա-
նել ՝ի լոյս առաւածութեանդ քո,
և ընուլ երկնային սիրոմբ ՝ի լուսե-

զէն փառաց քոց։ Եւ ասէ տէր։ Խնդա և ուրախ լեր, զի կատարեցեալ զկամն հայցումն քո։ և օրհնեալ զնա համբարձաւ։ Եւ դարձաւ սուրբ առաքեալն ուրախութեամբ մեծաւ 'ի փրկչէն։

Գնաց 'ի բանդն 'ի գիշերին և պահէին զսուրբն Սանդուխտ և զայլ հաւատացեալսն։ և բացան դրունքն ինքեանք, և եմուտ 'ի ներքս սուրբ առաքեալն և ասաց։ Խաղաղութիւն ընդ ձեզ սիրելիք Քրիստոսի։ Եւ տեսեալ զսուրբ առաքեալն զարանցին։ Եւ եկեալ առ սուրբն Սանդուխտ՝ համբուրեաց զկապանս 12 նորա, և ասէ ցնա։ Երանի՛ է քեզ դուստր երկնաւոր Թագաւորին։ և զարացուցեալ զնոսա բանիւք սուրբ աւետարանին 'ի սէրն Քրիստոսի, նշանեաց լուռ կալ և աղօթել։ Եւ ինքն տարածեալ ընդ ձեռս իւր յերկինս ասէ։ Գոհանամ զքէն տէր իմ՝ և Աստուած Յիսուս Քրիստոս միածին որդի Աստուծոյ, որ վասն փրկութեան աշխարհի մարդկան եկիր յերկիր։ հայեաց

այժմ յերկնից 'ի պատրաստ բնա-
կութենէ քումմէ՝ յաղագս քո
Սանդուխտ, որ եմ զաղայութիւն
իւր քեզ. արդ պահեա զսա տէր
իմ, և զբրացո 'ի պատերազմիս, և
զընկերս սորա, և ծագեա զլոյս
աստուածութեան քո 'ի վերայ սո-
ցա, և արա յամօթ զնաւարակուլ
թշնամին. վասն զի դու միայն ես
աստուած աստուածոց և տէր տե-
րանց. երեւեցո զնշան զօրութեան
քո 'ի վոտանդեալս մարմնով, զի քո
են և 'ի քո ահեղ անուանդ եղիցին
զօրացեալք մինչեւ յաւիտեան: Եւ
'ի կատարել աղօթից սրբոյն եղեւ
թնդիւն սաստկութեան, և վերա-
ցաւ ձեղուն բանդին և ծագեաց
լոյս յերկնից, որ առաւել էր քան
զՃառագայթս արեգական. և 'ի
մէջ լուսոյն ձայն երկնաւոր աւե-
տեաց, որ ասէր առ նահատակն.
Քաջալերեցարուք և պինդ կացէք,
զի ես եկից և առից զձեզ առ իս:
Եւ դու, Սանդուխտ, որ եկիր զկնի
իմ, և արհամարհեցեր զերկրաւոր
պատիւս, և կոչեցեր զիս հայր,

տաց քեզ զվերագոյն լոյսն, և ա-
ռաւել պայծառ քան զբազմաց։
Եւ 'ի լսել զերկնաւոր զձայնն լու-
ծան կապանք նոցա, և ողջացան
անդամք մարմնոց նոցա, և յարու-
ցեալ փառաւորեցին զՔրիստոս Ա-
ստուած, և ասէին միաբան. Տէր
Յիսուս Քրիստոս Աստուած մեր,
գոհանամք զքոյ մարգասիրութե-
նէդ, որ եկիր յայց և 'ի խնդիր մեզ
կորուսելոցս, և փրկեցեր զմեզ 'ի
դիցապաշտութեանց, և ետուր մեզ
յաղթող լինել 'ի վերայ աներ-
ւոյթ թշնամւոյն։ Եւ քաջալերե-
ցեր զմեզ երկնաւոր ձայնիւ աւե-
տեացդ լուսեղէն Ճառագայթիւք
աստուածութեանդ քո, և զկա-
պանս մեր փշրեցեր, և զհարեալ
մարմինս մեր ողջացուցեր։ Արդ
մեք զի՞նչ կարեմք մատուցանել
քում աստուածութեանդ, բայց
զանձինս մեր մատուցանեմք 'ի հոտ
անուշից հօրդ։ Եւ կատարեալ զա-
ղօթսն, և 'ի փարատել լուսոյ Ճա-
ռագայթիցն հայեցեալ տեսին ըզ-
սուրբ առաքեալն զի աղօթէր։ Եւ

յարուցեալ յաղօթիցն օրհնեաց ըզ
նոսա , և համբուրեաց սիրական և
երկնային համբուրիւն ։

Եւ տեսեալ զայն նշանս բանա-
պանացն , և հայեցեալ տեսին ըզ-
գուրս բանին զի ՝ի բաց կային ,
և սուրբ առաքեալն Թադէոս ՝ի մէջ
նոցա , և զահի հարեալ ՝ի լուսոյն
գիմեցին ՝ի նեղքս . և ահեան ա-
ռաջի սուրբ առաքելոյն գոռալով և
ասեն . Եւ մեք հաւատամք յԱ-
ստուածն քո , զոր գու քարոզես
սուրբդ Աստուծոյ . ընկալ և խնա-
նեա զմեզ ՝ի թիւ հաւատացելոցդ ։
և փարեին զոտիւք առնն Աստու-
ծոյ , և աղաչէին արտասուօք և ա-
սէին . Թող մեզ սուրբդ Աստուծոյ ,
զի ոչ ՝ի կամաց , այլ ակամայ պա-
հէաք զգունդս սուրբ հաւատացե-
լոցդ ՝ի ծանր նեղութեան , վասն
ահի անօրէն Թագաւորին ։ Եւ իբ-
րեւ տեսաք զլոյսն ծագեալ ՝ի վե-
րայ ձեր ՝ի բանտիդ , տեսաք լու-
ծեալ զկապանս գոցա , ծանեաք և
զքեզ ՝ի մէջ գոցա , որ էիր վարդա-
պետ գոցա և առաջնորդ երկնաւոր

լուսոյն։ Ծանեալք հաստատապէս,
և գիտացեալք թէ նա է արարիչ երկնի և երկրի զոր գոյ քարոզեա։
Եւ հաւատացեալք ամենայն խորհրդովք մերովք, և խոստովանիմք թէ
նա է Աստուած, և ոչ ոք կարէ մեկնել զմեզ յԱստուծոյն քում 13,
ոչ կապանք և ոչ նեղութիւնք։ Արդ
արի փութա սուրբդ Աստուծոյ, և
խառնեա զմեզ 'ի գունդն Քրիստոսի, զոր մեռանիմք յահէ փառաց
Աստուծոյն քո։

Եւ գիտաց սուրբ առաքեալն է
թէ 'ի սեառնէ Աստուծոյ եղեւ կոչումն, և սեսին զլոյսն ծագեալ
յերկնից, և զձայն ահեղ հնչմանն։
ասէ ցնոսա։ Եղբարք 14 իմ մի երկնչիք։ փոխանակ զի նուիրեցէք
զձեզ Աստուծոյ, և հաւատացէք 'ի
միածին որդին՝ 'ի տէր մեր Յիսուս
Քրիստոս, և 'ի սուրբ Հոգին, և
նա ազատեցից վասն ձեր զՔրիստոս,
և շնորհեսցէ թողութիւն ձեզ, զի
զոյն յանցիցուք ասասարէք։ զի
մարդասէր է տէրն մեր և ողորմած,
և կամի զամենեսեան, որք

հորուսեալ էին 'ի մեզս, որպէս և դուք էիք։ Արդ սիրեաց զձեզ վասն բազում ողորմութեան իւրոյ, և ազգեաց զլոյս աստուածութեան իւրոյ 'ի սիրտս ձեր. և արար ըզձեզ ճանաչել զնա, զի նա միայն է Աստուած, և չկայ այլ ոք։ Արդ պինդ կացէք և զօրացարուք 'ի հաւատսն Քրիստոսի Աստուծոյ, և մոռացարուք զձեր անուտի և զխաբէական մոլորութիւնդ։ Եւ իբրեւ դադարեաց սուրբ առաքեալն 'ի խօսելոյ, ասէ ցնոսա. Արիք աղօթեցէք. և ինքն հայեցեալ յերկինս հառաչելովասէ. Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով 15 կամեցար և ծանուցար սոցա, և կոչեցեր առ քեզ. արդ պահեա զսոսա սուրբ անվնաս, և մի տար խոտորել յաչ կամ յահեակ, և բեւեռեա զսոսա 'ի չերմեռանդն գութ աստուածութեանդ քո. սրբեա զսոսա երկնային ազատութեամբդ, զի միաւորեալ բեւեռեսցին 'ի սէր միածնի որդւոյ քո սիրելւոյ։

Եւ կատարեալ զաղօթսն, ա-

ռեալ 'ի նմին գիշերի մկրտեաց զնո-
սա յանուն Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն սրբոյ։ Եւ էին նոքա թուով
երեսուն և երեք ընդ այր և ընդ
կին, որք 'ի ժամուն յայնմիկ հա-
ւատացին. և էին յազգէ բանդա-
պահացն։ Իսկ անիծեալն սատա-
նայ եղեալ 'ի կերպարանս առն
միոյ, և եկեալ 'ի բանդն կայր 'ի
հեռաստանէ, ձայն բարձեալ առ
բանդապետն ասէր. Զի՞նչ պա-
կաս էր ձեզ զի թողէք զմեծ աս-
տուածն Անահիտ, և զմայր աս-
տուածոցն Պիսիդոնէն 16, և գուք մո-
լորեցարուք զհետ առն միոյ Հրէի,
որ ուսոյց ձեզ նոր ուսումն, և
խաբեալ զմիտս ձեր կորոյս. Եկայք
դարձարուք, և պագէք երկիր Ա-
նահտայ. և ես աղաչեցից զաս-
տուածն ամենայն՝ որ առնէ ձեզ
թողութիւն։ Եւ խմացեալ թադէո-
սի զխորամանկութիւն չարին ասէր.
Ո՛վ բանսարկու չարեաց, լեր յետս
դարձեալ թշուառական։ Եւ լը-
ւեալ սատանայի զձայն սուրբ առա-
քելոյն՝ ասէր. Զձայնդ քո լսեմ,

այլ գիտեմ՝ ոչ ուր է։ Ասէ սուրբ առաքեալն ցաւառնայ։ Եւ այլ մի տեսցես զծառայս Քրիստոսի Աստուծոյ ոմն ազատելի և սիրեալ, չար և անամօթ. մինչեւ յերբ ոչ ամաչես զոս յԱստուծոյ. երկիր 'ի ջրո�թենէն Աստուծոյ, և երթ յետս չարագլուխ վիշապ։ Եւ 'ի սատանայ սուրբ առաքելոյն՝ եղեւ խաւարեալ չարն, և տանջէր 'ի հրեշտակաց սրբոց։ Եւ տեսեալ նորահաւատելոյն զանեներելի տանջանս չարին՝ հաստատէին 'ի հաւատն Քրիստոսի. և ձայն բարձեալ սատանայի՝ լայր գառնապէս, և ասէր. Եղբա՛կ եղէ՛ է որ յաղթեցայ 'ի խաչելոյն, և կորեայ. բայց գիտեմ զինչ արարից, մոլոր 'ի սերաս իշխանացն և գրգռեցից զնոսա հանդերձ թագաւորաւն, և արասցէ զձեզ սրամահ։ Ասէ սուրբ առաքեալն. Երթ յետս սատանայ, սատանայն տեր 'ի քեզ։ Եւ իբրեւ լուաւ եղեւ անհետ 'ի տեղւոյն, երթեալ մտանէր յաղքուներն, և գրգռէր զբարբարոսն 'ի վերայ սրբոցն։

Եւ իբրեւ եղեւ առաւօտ, խորհուրդ արարեալ Թագաւորին վասն դատերն 17 իւրոյ Սանդխատոյ, Թէ զինչ պարտ է առնել. վասն ապատման ոչ կարէր տալ հրաման, վասն ազէտի զԹոյ հայրուԹեանն, զի առաւել սիրէր, և մինչ յիշէր լայր գառնապէս։ Ապա յղէր 'ի բանդն նախարարս զոմն ածել զտուրքն Սանդուխտ, և յուզեալ 18 զաշխարհապոլոտայն զի գտեալ ածցեն զնոր առաքեալն Թագէոս որ մոլորեցոյց զդուստրն իւր. և իբրեւ եհաս իշխանն 'ի բանտն բազում ամբոխիւ, եռեւ զդուռն բանդին 'ի բաց, և զարմացաւ. հայեցեալ 'ի նեղքս տեսանէր լոյս սաստիկ շուրջ զնոքօք, և ամբոխս բազում. և տուրբ առաքեալն կայր յոտն, և ուսուցանէր նոցա զբանն կենաց։ Եւ իբրեւ եռեւս զամենայն և զլոյսն զի առաւել պայծառանայր, զահի հարեալ յերկիր կործանեցաւ, և տանջէր անեղեւոյԹ տանջանօք և ձայն ահեղ զնոքօք։ Եւ խմացեալ արքայ առաքելոյն, եկեալ 'ի դուրս տեսա-

նէր զի անկեալ Թաւալէին ընդ գե-
ամն, եգ ձեռն 'ի վերայ և բժշկեաց
զնոսա. և հաւատաց Իշխանն և ի-
տուն այր ընդ նմա։ Եւ էր այն
մեծ կարգեալ 'ի վերայ ամենայն
գիւղն, և հրամանատար ամենայն
տանն արքունի. նա էր երկրորդ
տերութեանն Հայոց, յայնժամ
սատանայի խիզբս զծնեալ առեալ 19
լայր գառնապէս և ասէր. Զմեծ զկն
գլխոյս խմոյ կորուսի։ Եւ իբրեւ ոչ
կարէր մնալ 'ի բանդն յահէ երկ-
նաւոր զօրութեանն, փութով հա-
սանէր յարքունիսն, և գրգռեալ
գառնացուցանէր զչար և զանօրէն
Թագաւորն. ապա հրաման տայր
սրով սպանանել. և կատարեցան
յաւուր յայնմիկ ոգիք երկերիւր։
Եւ եղեւ ձայն ահեղ, և Թնդիւն
երկնաւոր զօրացն, որ ի չքեալ ոգ-
ջունէին զսուրբ նահատակսն, և
յահեղ ձայնէն բազումք կորեան
յանօրինացն։ Եւ իբրեւ եղեւ գի-
շեր, կայր լոյսն երկնաւոր հանապա-
ռատ 'ի վերայ նոցա. յայնժամ
յղէր 'ի տուն իւր սուրբն Սան-

դուխտ գազա 'ի հօրէն իւրմէ և տայր բերել բարակ կտաւս, և առեալ զհաւատացեալ սուրբ ընկերսն, ամ փոփէր զմարմինս նոցա, համբուրէր և ասէր. Երանի՛ է ձեզ, եղբարք իմ և քորք. որք արժանի եղէք երկնաւոր ուրախութեանցն, յիշեցէք և զիս զաղախինս ձեր. և Թաղէր զնոսա մօտ յատարանս իւր, և տայր զգուշութիւն, զի մի ոք գիտացէ յայրքունի տանէն. և ինքն փութով հասանէր 'ի բանդն։

Եւ տեսեալ զսուրբ առաքեալն զի աղօթէր և լոյս մեծ 'ի վերայ նորա, զահի հարեալ սուրբն Սանդուխտ՝ անկանէր 'ի վերայ երեսաց իւրոց արտասուօք և համբուրէր զգարշապարս առնն Աստուծոյ և ասէր. Տէր իմ և հայր, որ գտեր զիս զմոլորեալս, և ծանուցեր ինձ զերկնաւոր զտէրն իմ զՅիսուս Քրիստոս զմիածին որդին, այժմ աղօթեա վասն իմ և օրհնեա զիս, զի և ես փութացեալ հասից ընկերացն իմոց, և եղէց արժանի տեսանել զտէրն զՔրիստոս քեռ հան-

գերձ։ Եւ տեսեալ սուրբ առաքելոյն զարտասուս սրբոյ կուսին Սանդրիտոյ, և զՋերմեռանդն գութ սիրոյ նորա առ Քրիստոս, և ասէր. Երանի՛ է քեզ գուսար երկնաւոր թագաւորին, համբերեա ասա ժամանակ 20, և այժմ տեսանես զլոյսն ամենայն արարածոց։ Քաջալերէր և զայլ հաւատացեալսն սուրբ բանիւ աւետարանին և ասէր. Պինդ կացէք, զի այժմ առնուք զլուսեղէն պսակն։ Եւ կատարեալ ըզխօսսն մատուցին առաջի հաց. և առեալ զհացն օրհնեաց և եհ սրբոյն Սանդիտոյ և ընկերացն. Ճաշակեաց ստակաւիկ մի և ինքն. և իբրեւ յարեան՝ օրհնեցին և գոհացան զսուրբ Երրորդութենէն։ Եւ կընքեալ զանձինս իւրեանց նշանաւ սուրբ խաչին, և ենջեցին։

Իսկ սուրբ առաքեալն կայր և աղօթէր ասելով. Տէր Աստուած իմ, հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, չեմ բաւական գոհանալ զառատ ողորմութենէդ քումմէ, որ կոչեցեր զիս զանարժանս 'ի վիճակ

առաքելութեան, և սրբեալ մաքրե-
ցեր և արարեր զնա տաճար սուրբ
Հոգւոյդ, և եառուր ինձ վիճակ զաշ-
խարհս զայս, ուր քարոզեմ զբանս
սուրբ աւետարանի քո. զի որ հա-
ւատացեն 'ի սուրբ ահեղ անուանդ
քո, կատարեալս ընկալցիս զնոսա
'ի հոտ անուշից 'ի լոյս աստուածու-
թեանդ քո։ Եւ խառնեա զնոսա 'ի
հրեշտակերամ դասս վերին բանա-
կացն. ընկալ և զմեզ պատարագ 'ի
հոտ անուշից աստուածութեանդ
քո. պահեա և զողջոյս զայս Սան-
դուխտ, զի է սուրբ կուսութեամբ.
և տուր համբերութիւն սմա պատե-
րազմել զհանդէս մարտիրոսական
ընթացիցն, և առնուլ զպսակն լու-
սոյ 'ի դլուխս իւր։ Եւ 'ի կատարել
աղօթիցն, երեւեալ փրկիչն ասէ.
Խաղաղութիւն ընդ ձեզ, սիրելիք
իմ. և տեսեալ սրբոյն Թադէոսի
զփրկիչն անկաւ 'ի վերայ երեսաց
իւրոց, և երկիր երպագնեմս։ Եւ ասէ
փրկիչն. Լուայ աղօթից քոց և զոր
ինչ խնդրեցեր յինէն եառ քեզ.
և կատարեսցիս մարտիրոսական

հանդիսիւ Սանդիսատով հանդերձ և այլ աշակերտելովքդ ։ Եւ ծագեցեալ զլոյս աստուածութեան իմոյ 'ի վերայ ոսկերաց ձերոց . և ուր կատարեսցին նուէրքդ ուխտիցն որ վասն անուան իմոյ մատուցանեն 'ի վերայ ձեր՝ եղիցին ինդրուածքդ հայցման նոցա անարգել, և առաւել վասն քո ։ Եւ դու քաջալերեալ երեւեսցես այսօր . և մի երկիցես և մի զանգիտիցես , զի ընդ ձեզ եմ 'ի փրկել զձեզ։ Ասէ Թադէոս . Տէր իմ և Աստուած իմ, ողորմեա ինձ . և մի թողուր զսոսա որք հաւատացին 'ի սուրբ անունդ քո , և յեա մահուն իմոյ պահեա զնոսա աջով քով . և մի թողուր զվնճակս քո զայս , զոր շնորհեցեր ինձ տէր իմ . և բարձեալ զկռապաշտութիւն մոլորութեան 'ի բարբարոս ազգէս ահեղ աստուածութեամբդ քով, և մի առներ ըստ գոցա անօրէն և չարագործ 21 . զի մոլորեցոյց զդոսա բանսարկուն չարն, զրա զնոսա յամօթ և հալածական, և խորտակեալ ընկճեա զնա , և ըստ մենքենայս չարութեան նորա , և

վիճակեա զսուտ վերասին վիճա-
կաւն 'ի լոյս ասասուածութեանդ
քո. և արա զսուտս ժողովուրդ յա-
ւիտենական, և երկնաւոր գաւթին
ծնունդք. զի միաբան փառաւորեա-
ցեն զսուրբ ասասուածութիւն 22
անուշահոտ վարուք իւրեանց: Եւ
ասէ տէր. Լուայ աղաչանաց քոց,
ոչ թողից զհաւատացեալս 'ի ձեռաց
խմոց մինչեւ 'ի վախճան աշխարհի,
և ոչ զվիճակ բաժնի քո. այլ փու-
թով կատարեցից զկամս քո, և
գրոշմեցից զդոսա 'ի գունդ աս-
տուածութեան խմոյ, և արարից ըզ-
դոսա 'ի գունդ լուսոյ ասասուածու-
թեան խմոյ: Եւ արարից զդոսա
ինձ ժողովուրդ սեփհական, և տաց
զաւետիս իմ 'ի միտս նոցա, և արա-
րից փախստական զչար գազանն 'ի
դոցանէ, և պարսպեցից զդոսա յու-
սով ասասուածութեան խմոյ: Հայե-
ցայց 'ի գոնսա և ողորմեցայց դոցա.
և դու խնդա և ուրախ լեր: Եւ օրհ-
նեալ համբարձաւ:

Եւ մատուցեալ սուրբ առաքեալն
զարթոյց զհաւատացեալսն և զաշա-

կերան իւր, և զաւուրս ազախին
Բրիտասի Սանդուխտ, և ասէ,
Աղօթեցէք. և ինքն սկսաւ աղօթել
և ասել զսաղմոս զայս. Օրհնե-
ցեց զտէր յամենայն ժամ։ Եւ
կատարեալ և այլ սաղմոս բացում,
և արտասուօք հանդերձ փառաւո-
րէին զԱստուած, և էին ուրախու-
թեամբ մեծաւ։ Երբեւ կատարեցին
զաղօթսն, ասէ տուրբ առաքեալն
ցհաւատացեալսն. Պինդ կացէք և
համբերեցէք, զի այժմ առնուք ըզ-
պսակն լուսոյ 'ի գլուխս ձեր։ Եւ
հայեցեալ 'ի տուրբն Սանդուխտ և-
տես զերեսս նորա արտասուօք լի,
և ասէ, Մի վատասրտիր, և մի եր-
կընչիր։ Կարծելով կարծեաց թէ
երկեաւ 23։ Եւ ասէ տուրբն Սան-
դուխտ. Ցեր իմ և հայր հոգւոյ ի-
մոյ, ոչ եմ վատասրտեալ, այլ ցան-
ծամ և ուրախ եմ և փութամ տես-
տանել զԲրիտասս յոյս իմ, և լինել
առաջի նորա յամենայն ժամ, զի կա-
րի անձկացեալ եմ տեսանել զլոյսն
երկնային։ Եւ ասէ տուրբ առա-
քեալն. Երանի ի քեզ քոյր իմ և

գուարթ, զի այժմ՝ հասանեալ առ որ անձկացեալն էս, և առնուս ըստ պատկին լուսեղէն 'ի գլուխս քո։ և լինիս յանդիման առաջի Աստուծոյ երկնաւոր Թագաւորին։ զի պարծեալ և գեր 'ի վերոյ գոանիս քան զբազու�վասն ջերմեռանդն գնացեալ քոց։

Արեւ գագարեաց, եղեւ առաւօտ, եկին հասին իշխանքն բազում՝ մեծամեծք 'ի գուռն բանդին։ Հանեալ արտաքս զտուրբ առաքեալն և զՄանդուխտ, և զայլ քրիստոնեայսն որ էին 'ի բանդի, և ածին կապանօք յատարանս Թագաւորին, և զտուրբն Մանդուխտ արձակ։ Ասէ տուրբն Մանդուխտ մեծարարան ձայնիւ ցհաւատացեալ ընկերակիցսն իւր ցնծալով։ Ողբարք իմ՝, ոմանք կացէք և զօրացարուք 'ի Քրիստոս, զի ոչինչ են ապառնալիք երկրաւոր Թագաւորացս։ Յայն միայն հայեցարուք, յոր հաւատացէքն՝ յերկնաւոր Թագաւորն։ Ամենասուք զմիտս և զխորհուրդս ձեր, և նա տացէ ձեզ զարութիւն, զի նա

միայն է Աստուած, և չկայ այլ զատ։ Դա պահեցէք զձեզ 'ի սնոտի և 'ի խաբէական պատրանացս։

Եւ մինչդեռ խօսէր ընդ սուրբ ընկերակիցսն իւր, խնդրեաց 'ի նեղքս Թագաւորն զսուրբն Սանդուխտ, և մտեալ 'ի նեղքս, ասէ Թագաւորն. Մօտ եկ դուստր իմ. և նա ոչ հայեցաւ 'ի նա, և ոչ գնաց մօտ։ Եւ ասէ Թագաւորն. Ուրացո՛ր զկս, և սիրեցի՛ր զմոլորեցուցիչն. եթէ ոչ դառնաս յամուսնութենէ քոյ՝ երդուեալ յաստուածսն ամենայն՝ քար մահուամբ կորուսից զքեզ և զնա։ Ասէ սուրբն Սանդուխտ. Որ կոչեա մոլորեցուցիչ, նա զկս 'ի խաւարէ 'ի լոյս փոխեաց, և ծանոյց ինձ զաչս իմ զարարիչն երկնից և երկրի, և զՈրդին միածին, և զսուրբ Հոգին որ 'ի նոցանէ. ես փութամ առ ակն իմ Քրիստոս, նա է ակն սերանց և Թագաւոր Թագաւորաց, որ է լոյս և կեանք ամենայն արարածոց։ Եւ ասէ Թագաւորն. Ո՞վ է նա որ կոչեա Աստուած և Հայր։ Ասէ սուրբն Սան-

դուխա. Աստուած, նա է Աստուած, որ արար զամենայն յոչընչէ, և հաստատեաց զամենայն արարածս բանիւ բերանով իւրով, և ձեր մեղրեալ միոք և խաւարեալ խորհուրդք թողեալ զԱստուած զարարիչն ձեր, որ զձեզ յոչնչէ արար և հաստատեաց. և դուք պագանէք երկիր ուրուականաց կուռս մեռելոտեաց, որ ոչ տեսանեն և ոչ լսեն յորում՝ բնակեալ են դեռք, որ խաւարեալ կորուսին զմիտս ձեր, և արարին զձեզ արգիս դեհենին։ Արդ ունիք երթալ 'ի խաւարն արտաքին գործակցաւն ձերով սատանայիւ, ուր լալ աջաց է և կրճել ատամանց։

Յայնժամ արտմեալ Թագաւորն, եւ հրամեան կապել և քերել զի այրեսցի։ Յայնժամ մատուցեալ գահճապետն կապեաց զսուրբն Սանդուխտ. ապա ընթացեալ ոմն 'ի հաւատացելոցն պատմեաց սրբոյ առաքելոյն, եթէ զՍանդուխտ կապեցին և կամին չարչարել։ Իսկ սուրբ առաքեալն յարտասուս է զեալ ասէր. Տէր իմ Յիսուս Քրիս-

տոս, հայեաց յաղախին քո. ը-
բացո և արա յամօթ զչար թշնամին
ՀՀմարտուութեան։ Իսկ սուրբն Սան-
դուխտ մինչդեռ կայր կապեալ և
ձեռն արկեալ կամէին քերել, ա-
ղաղակեաց յերկինս մեծաբարբառ
արիաբար և ասէ. Տէր իմ Յիսուս
Քրիստոս, փութա հաս ինձ յո-
գնականութիւն, զի դու ես իմ
հայր և արարիչ. ապաւէն և կեանք,
մի թողուր զմոլորեալ ոչխարս հո-
ոի քո։ Եւ յաղաղակել սրբոյ աղ-
ջըկանն, եղեւ շարժումն, և ծա-
դեաց լոյս յերկնից, և եղեւ ձայն որ
ասէր. Քաջալերեաց դուստր իմ,
զի ընդ քեզ եմ 'ի փրկել զքեզ, և
լուծան կապանք նորա, և 'ի լուսոյ
փայլատականցն կորեաւ դահճա-
պետն, և բազումք ընդ նմա. և պա-
տեաց ահ զամենեսեան թագաւո-
րաւն հանդերձ, կարծէին զամենե-
սեան կորուսանել 24։ Իսկ սուրբն
Սանդուխտ փութով հասանէր,
ուր ունէին զսուրբ առաքեալն. և
էկեալ փարէր զոտիւք նորա, և ա-
սէր. Տէր իմ և հայր հոգւոյ իմոյ,

ահա զնա Քրիստոս փութով արձակեաց 'ի կապանաց, և յամենայն արար զսատանայ և զարբանեակս նորա. և յարուցեալ գոհանային զաւառնէ։ Յայնժամ գայր Իշխան ոմն հրամանաւ Թագաւորին, և անկանէր առաջի սուրբ առաքելոյն ասելով. Յղեաց Թագաւորն առ քեզ, և ասէ. Մեղայ քեզ և Աստուծոյն քում. Թող մեզ և աղօթեա, զի անցցէ բարկութիւն ահեղ սատակութեանս, զի կորնչիմք խսպառ, և զոր ինչ կամիս դու առնեմք. հրամայեաց և զձեզ արձակել 'ի կապանացդ։

Եւ իբրեւ եառեալ զնա և լուաւ զհրամանս Թագաւորին, յարտասուս եղեալ աղօթէր և ասէր. Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայեաց 'ի Ժողովուրդս քո, և մի առներ ըստ գործս մեղանաց. Թող գոցա ասէր. զի ոչ գիտեն զինչ գործեն. և 'ի կատարեալ աղօթիցն, լուծան կապանք ամենայն հաւատացելոցն։ Եւ գագարեաց ձայն ահեղ շարժմանցն, և տեսեալ Իշխա-

նին Երկեաւ : Ասէ առաքեալն . Մի
երկնչիր , երթ պատմեա թագաւո-
րին քում զոր լինչ տեսերդ : Եւ
երթեալ ասէ ցթագաւորն . Տեսի
զառաքեալն ոչ որպէս մարդ՝ այլ
առաւել քան զմարդ . և լոյս շուրջ
զնովաւ , և որպէս աղօթեաց՝ անցա-
նեն այն ցասումն յերկրէս 25 : Իսկ
թագաւորն գրդռեալ՝ի չարէն ա-
սէ . Մի թէ անցցոյց նա զբարկութիս ,
այլ Արամազդ և Անահիտ մեծ աս-
տուածքն որ են շինուութիւն աշխար-
հիս և փառք մեր թագաւորացս :

Յայնժամ հաւատաց իշխանն ա-
մենայն տամբ իւրով , մկրտեցաւ և
կոչեցաւ անուն նորա Պամուէլ .
զի ոչ գտանէր նման նորա 'ի մէջ
աշխարհիս Հայոց . փոքրեաց զհերս
իւր և եղեւ աշակերտ սուրբ առա-
քելոյն : Եւ լուեալ թագաւորին
տայր վարել բեւեռս հրացեալ ընդ
ուսս նորա , և այնպէս կատարեցաւ .
և այլք յաշակերտաց սրբոյ առա-
քելոյն , որ եկեալ էին ընդ նմա բա-
զումք : Եւ 'ի ժամուն դիպեցան չորք
և երեք 26 յաշխարհէս Հայոց , և

զնոսա չարչարեալ զոմանս հրա-
ցեալ երկաթով զլսոունս ծակէին,
և զայլսն սրով սպանանէին, և կա-
տարեցան յաւուր յայնմիկ ուրթ նա-
հատակք. և եղեւ նշան լուսոյ 'ի վե-
րայ նոցա, և ահ սատակութեան 'ի
վերայ անօրինացն: Իբրեւ եղեւ գի-
շեր, եկեալ սուրբ առաքեալն ուխտ-
ընկալօքն, առեալ զմարմինս նո-
ցա պատեաց պատուական հանդեր-
ձիւք իւղովք և խնկօք. և եդ 'ի փոքր
ձորակին ուր էին օթեվանք նոցա,
և էտ զգուշութիւն զի մի ոք գի-
տասցէ: Ի նմին գիշերի եկեալ
սուրբն Սանդուխտ, անկանէր ա-
ռաջի սուրբ առաքելոյն ասելով.
Երանի է քեզ տէր իմ հայր, զի ըզ-
բազումս արարեր արժանի քրիստո-
սական պսակին: Ասէ սուրբ առա-
քեալն. Երանի եւս քեզ է որ ար-
ժանի եղեր զնոսա յղարկել. խնդա
և ուրախ լեր զի փութով հասանես
դու առ Քրիստոս. և մխիթարէր
սուրբն Սանդուխտ զամենայն հա-
ւատացեալսն. կերակրէր զնոսա
հացիւ և զգեցուցանէր հանդերձիւ,

և ոչինչ առնէր նոցա պակաս, և քարոզէր զբանն կենաց, և դարձուցանէր զբազումս առնելով նըշանս և սքանչելիս։

Յայնժամ հաւատացեալ կին ոմն 'ի մեծ ազգէ ամենայն տամբ իւրով որ էր 'ի մերձաւորաց Թագաւորին, որում անուն էր Զարմանդուխտ։ Եւ առեալ սրբոյ առաքելոյն մկըրտեաց զնոսա ոգիս երկերիւր, և լուեալ Թագաւորին տայր հրաման զԶարմանդուխտ սրով սպանանել միայն։ Եւ իբրեւ կատարեցաւ, եղեւ 'ի վերայ նորա նշան, և բազումք հաւատացին յաւուր կատարման սրբոյն. և լուեալ Թագաւորին մրմռեալ իբրեւ զառեւծ 'ի վերայ սրբոյն Սանդխտոյ, և ասէր. Ե՞ա զամենեսեան առաւել մոլորեցուցանէ, և տայր հրաման զնի սրով սպանցի։ Եւ լուեալ սուրբ առաքելոյն զհրաման անօրէն Թագաւորին, աղօթէր առ Քրիստոս զամենայն զգիշերն վասն սրբոյն Սանդխտոյ։

Իբրեւ եղեւ առաւօտ, եկեալ

Սանդուխտ առ սուրբ առաքեալն, անկանէր առաջի ոտից՝ համբուրէր և ասէր. Տէր իմ, խորհէի 'ի սրտի իմում թէ զի՞նչ արասցէ ինձ Քրիստոս լոյսն իմ. որպէս եղէ 'ի քուն յայսմ գիշերի, լոյս ծագեաց 'ի վերայ իմ. և 'ի մէջ լուսոյն այր մի լուսազգեստ, որ ոչ կարէի առնուլ զնմանութիւն յառաւել լուսոյ ճառագայթից՝. ձայնեաց զիս և ասէ. Սանդուխտ, արի փութա և զգեցիր զլոյս իմ. և ես յարտասուս եղեալ ասեմ. Տէր իմ, չեմ արժանի. և սասաեալով զգեցոյց ինձ ըզլոյսն որպէս զվերարկու. եդ և պսակ լուսեղէն 'ի գլուխս իմ, և զարդարեաց զիս լուսեղէն զարդուք, և ես հիացեալ կայի. և ասէ. Ուրախ լեր Սանդուխտ, զի ոչ թողից զքեզ։ Եւ յանկարծակի եղեւ թնդիւն ահեղ և զարթոյց զիս. և ես յարուցեալ փառաւորեցի զՔրիստոս Աստուած, որ արժանի արար զիս այսպիսի սքանչելի տեսլեան։ Իբրեւ լուաւ սուրբ առաքեալն, խմացաւ թէ այսօր փոխի

յաշխարհէ, և զգենու զփառս լուսեղէն դասուց. և առնու զպսակն լուսոյ 'ի գլուխ իւր, և յարտասուս եղեալ սուրբ առաքեալն ասէ. Երանի է քեզ Սանդուխտ, զի այս որ երեւեցաւ քեզ ինքն Քրիստոս է. վասն զի եսուս զՋերմեռանդն գուշ սիրոյ քո առ ինքն, վասն այնորիկ երեւեցաւ քեզ, զի առաւել հաստատեսցէ զքեզ 'ի լոյս աստուածութեան իւրոյ. և լոյս նոր զգեցոյց քեզ որպէս վերարկու, և պսակն լուսեղէն 'ի գլուխ քո, վասն զի թողցես զթանձրամած մարմին քո, և զգենուս զլոյսն երկնաւոր, և զպսակն լուսոյ յաղթութեան մարտիրոսութեան արժանի լինիս առնուլ 'ի գլուխ քո: Եւ զարդարիլ վերագոյն լուսով, բնակել 'ի լոյս աստուածութեանն. և յամենայն ժամ կաս յուրախութեան վերին լուսոյն: Եւ որ ասացն թէ խնդա և ուրախ լեր, զի ոչ թողից զքեզ, զի անմեկնելի է Քրիստոս 'ի սիրելեաց իւրոց, և ուրախ առնէ զամենեսեան որ կան 'ի սէր աստուածութեան նորա:

Իբրեւ լուաւ սուրբն Սանդուխտ զպատմութիւն աքանչելի տեսլեանն, յարտասուս եղեալ անկանէր առաջի ոտից սուրբ առաքելոյն ասելով. Երանի է քեզ հայր իմ, որ ծնար զիս վերստին և ուսուցեր ինձ զլոյսն կենդանի զՔրիստոս, զի դու եղեր ինձ Ճանապարհ կենդանի և դեղ անմահութեան. արդ խնդրեա 'ի Քրիստոսէ, զի փութով ժողովեսցէ զիս առ ինքն։ Եւ ասէ սուրբ առաքեալն. Ահա փութով հասանեաս 'ի լոյսն կենդանի առ որ անձկացեալն ես։ Եւ ասէ սուրբն Սանդուխտ. Տէր իմ, ազաչեմ զքեզ, մինչ փոխիմն՝ մօտ կայցես առ իս, զի ոչ կարեմ տեւել 'ի հոգեւոր սիրոյ քոյ. և յարուցեալ աղօթէին։ Եւ համբարձեալ յերկինս զձեռս իւր ասէր. Յիշեա զաղախին քո տէր, և տուր սմա համբերութիւն 'ի պատերազմիս այսօր, և արա յաջող զթշնամին. զի ծանիցեն ամենայն հաւատացեալք թէ դու միայն ես Աստուած յերկինս 'ի վերս, և յերկիր 'ի խոնարհս։ Եւ դարձեալ

'ի սուրբն Սանդուխտ օրհնեաց զնա և ասէ. Պինդ կաց և զօրացուսցէ զքեզ Քրիստոս։ Եւ ահա յանկարծակի հասին բարբարոս խշխանքն զօրականքն հանդերձ 'ի գուռնն։ Իսկ սուրբ առաքեալն ելեալ գնայր ընդ մէջ նոցա։

Յայնժամ տարան զերանելին 'ի տեղի սպանմանն. ասէ ցայնոսիկ որ տանէին. Համբերեցէք սակաւիկ մի, զի կացից յաղօթս առ տէրն իմ և Աստուած։ Եւ հայեցեալ յերկինս հանդերձ արտասուօք և ասէ. Հայր երկնաւոր սիրելի որդւոյ քոյ Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ և փրկչի, հայեաց յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և արա առ իս զգութ մարդասէր շնորհաց քոց։ Եւ ընկալ զաղաչին քո, յանուն Որդւոյ քո սիրելւոյ 'ի հոտ անուշից, և արա զիս արժանի երկնաւոր լուսոյ աստուածութեան քո, վայելեալ յանսպառ և յաւիտենական բարիսն, զոր խոստացար սիրելեաց քոց։ Եւ հրաժարեալ 'ի սրբոյ առաքելոյն ընկալաւ զօրհնութիւն 'ի

նմանէ . և մատուցեալ 'ի տեղի հան-
դիսին ասէ . Արիք կատարեցէք ըզ-
կամս հօրն ձերոյ սատանայի . և մա-
տուցեալ ինքնին կամաւորութեամբ
զպարանոցն : Եւ ձգեալ դահճին
զսուրն , կամէր սպանանել զսուրբ
կոյսն Սանդուխտ , և ահար զդահ-
ճապետն և սատակեաց զնա : Իբրեւ
տեսին բարբարոսքն առաւել զայ-
րացեալ 'ի չարէ անտի , առեալ ըզ-
սուրսն դիմեցին 'ի վերայ նորա , և
անդէն հարեալք զնրեարս սատա-
կէին : Իսկ սուրբ աղախինն Քրիս-
տոսի կայր յաղօթս և ասէր . Տէր
Յիսուս Քրիստոս , ընկալ զիս 'ի
յարկսդ յաւիտենից , զի ցանկամ
և ուրախ եմ ընդ չարչարանս և ընդ
մահ որ վասն անուանդ քո , որ զո-
րացուցեր զիս յաղթել որ մար-
տեան ընդ իս , զի քո է յաղթու-
թիւն և քեզ վայել է փառք յաւի-
տեանս , ամէն : Եւ նոյն ժամայն
պատանի ոմն ահար զկուրծս երա-
նելոյ կուսին սրբոյն Սանդխտոյ , և
ել արիւն և բուրեաց հոտ անու-
շութեան , և աւանդեաց զոգին

'ի Քրիստոս բարի խոստովանու-
թեամբ 'ի Հայր և յՈրդի և 'ի Հո-
գին սուրբ : Եւ ծագեաց յերկնից
իբրեւ սիւն լուսոյ , և եղեւ շար-
ժումն և ձայն ահեղ երկնաւոր զ-
ըստաց , որք օրհնէին զԱստուած , և
եկաց սիւն լուսոյն 'ի վերայ սուրբ
մարմնոյն զերիս տիւս և զերիս գի-
շերս : Եւ հաւատացին յաւուր
յայնմիկ ոգիք իբրեւ երկու հազար
ընդ այր և ընդ կին , և ոչ մեկնեցան
'ի տեղւոջէն ուր մարմին սրբոյն
Սանդխատոյ էր . և եկեալ սուրբ ա-
ռաքեալն 'ի գիշերի մկրտեաց զնոսա
յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ : Եւ առեալ զմարմին սրբոյն
Սանդխատոյ՝ եդ 'ի նմին տեղւոջ և
արար անեղեւոյթ զհանգստարանն
երանելի սուրբ տիկնոջն :

Եւ յետ երից աւուրց կատարե-
լոյ սրբոյն Սանդխատոյ մօտ յառա-
ւօտն , կայր յաղօթս սուրբ առա-
քեալն , և երեւեալ փրկիչն ասէ .
Խաղաղութիւն ընդ քեզ սիրելի իմ.
արդ փութա , այսօր հասանես 'ի
հանդէս մարտին , և համբերեա զի

բազում չարչարանս ածեն 'ի վե-
րայ քո. և ես ոչ թողից զքեզ. և
օրհնեալ զնա եղիս աներեւոյթ։
Իսկ սուրբ առաքեալն աղօթէր և
ասէր. Գոհանամ զքէն հայր
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
որ ոչ թողեր զիս 'ի ձեռանէ յայս
'ի բարբարոս երկրիս, այլ առաւել
գթացար յիս։ Արդ ընկալ զիս 'ի
հոա անուշից ատտուածութեանդ
քո, և զօրացո զիս 'ի պատերազմիս.
ընկալ և յիշեա տէր զաղախին քո
Սանգուխտ, որ փոխեցաւն առ քեզ,
և խառնեա 'ի գունդս սրբոց քոց,
որ վասն անուան քո պատարագե-
ցան, և ընծայեա զնոսա 'ի լոյս ատ-
տուածութեանդ քո. պահեա ըզ-
հաւատացեալս որ 'ի քեզ ապա-
ւինեցան։ Այժմ լուր պաղատա-
նաց նոցա և հայցուածոց՝ մարդա-
ուէր. և մի անտես առներ ըզ-
խնդրուածս նոցա, որ աղաղակեն
առ քեզ 'ի տուէ և 'ի գիշերի, և հե-
ռացո զչար բանսարկուն 'ի տոցանէ,
և արա յամօթ, զի մի իշխեսցէ մեր-
ձենալ 'ի գունդ հաւատացելոց քոց.

և զբաց զծառայքս քո 'ի սէր պատուիրանի քո համբերական ընթացեալք մինչև խոպան։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն, օրհնեաց զհաւատացեալսն և ասէ. Որ զեակք, որովհետև եռուք զանձինս ձեր Աստուծոյ, և գրեցայք 'ի գունդն Քրիստոսի, պինդ կացէք 'ի հաւատս, և զբաց զանձդ Քրիստոս Աստուած, և բազմացուցէք զձեզ և արարէք յամօթ զբանտարկուն չարեաց, զմոլորեցուցիչն հեթանոսաց։ Եւ արկցէ զնա կոխան առաջի ոտից ձերոց մինչև յաւիտեան. և ես ահա փոխիմ առ ձերն իմ Քրիստոս, և աղաչեցից զնա զի առաքեսցէ զհրեշտակ զբուսթեան իւրոյ, և պահեսցէ զձեզ 'ի չար լծոյ ծառայութեան հեթանոսական մոլորութեանն ուստի էաւ զձեզ, և պարգևաց 'ի բովանդակաց աստուածութեան իւրոյ, Յոգովուրդ սեպհական. արդ նա է ձեր հայր, տէր և թագաւոր, նա պահեսցէ զձեզ և ոչ թողցէ։

Որբեւ լուան հաւատացեալքն և-

թէ փոխեմ փոխի առ Քրիստոս, ամենեքեան եղեն յարտասուս, և անկեալ առաջի նորա համբուրէին զոտս նորա և ասէին. Տէր և կեցուցիչ հոգւոց մերոց, ազատեա վասն մեր, և խնդրեա 'ի Քրիստոսէ, զի ոչ թողցէ զմեզ 'ի ձեռանէ։ Եղեալ յարտասուս սուրբ առաքեալն ասէր. Տէր Յիսուս Քրիստոս, մի թողուր 'ի ձեռանէ զսակաւ ժողովուրդս քո որ փարին զինեա, և պահեա սուրբ ոգւով քո։ Եւ հրաժարեալ յամենեցուն արձակեաց յիւրաքանչիւր տեղիս։

Եւ իբրեւ գնացին հաւատացեալքն երկիւղաւոր օրհնութեամբն, էին հասին երկու խշխանք հրամանաւ անօրէն թագաւորին, և ամբոխս բազմութեան ընդ նոսա. յորոյ էին զամենայն տեղիս, կարծելով թէ ոչ կարեմք գտանել որոյն յերկին և յեռանդն։ Եւ խմացեալ սուրբ առաքելոյն ինքնին եկաց առաջի և ասէ. Ահա ես եմ զոր խնդրէք։ Եւ նոցա կալեալ ածին առաջի թագաւորին։ Տեսեալ զնա

Թագաւորին ասէ. Զմի՞ ես թա-
գէս. և ասէ, Դու ես. և հայե-
ցեալ 'ի նա Եսայ զերեսս նորա ա-
ռաւել պայծառ և սիրեալ, երկեաւ,
և ասէ. Զխնդրդ զոզացար զիա-
ջքեալ կուսին զասերն խնդ, և
զրաւեցեր զնա 'ի քեզ, և հեռա-
ցուցեր զնա 'ի հայրենի սիրոյս
խնդ, 'ի Ծիրանազգեաս և յոսկե-
հուռ պատուոյս. և արարեր ասել
զի տատուածոցն մերոց. և արարեր
զնա որդեա զմի յաղքատաց, մին-
չեւ ցառուին պատմութեան խնդ
կորոյս զնա 'ի սուր անազարմ։

Եւ ասէ սուրբ առաքեալն. Որ
ասացեր վասն սուրբ կուսին, ար-
դարեւ ես զոզացայ զնա 'ի սառնա-
մանեաց և յանգնդպին պատուոյ
չարաժեռ և խաւարային գործոց
չար պաշտամանցն մերոց, որք ձո-
նեալքդ էք Ինահատայ կռամոլ գի-
ւոցն։ Եւ զրաւեցի զմիս նորա 'ի
Բրիտանս, ծնանելով երկնաւոր
ծննդեամբ սուրբ առաքանաւն, և
հեռացուցանել զնա 'ի քո հայրե-
նի պղծութեանցն. զգեցոյց նմա

Քրիստոս փառս լուսեղէն զեր-
կնաւոր Հաւատոյն։ Եւ կար-
ծելով քո սպանանել զնա փոխե-
ցաւ 'ի մահուանէ 'ի կեանս . և
Թեւազգեցեալ էլ 'ի լուսեղէն բա-
նակն , ընկալաւ զանԹառամ պը-
սակն , և միացեալ 'ի սէր սա-
տանայնոցն խնդրեաց յամե-
նայն ժամ 'ի մէջ սրովբէական գա-
սուցն փառաւորելով զաւուրս զՀՐ-
ԿՐԹՈՒԹԻՒՆ . զի անդ է լոյսն ան-
ստուտ , և կեանքն յաւիտենականք .
և ձեր մոլորեալ են միտք , և
խաւարեալ խորհուրդք , և Թողեալ
զարարիչն երկնի և երկրի , որ զձեզ
յոչնչէ արար , և հաստատեաց 'ի
վերայ երկրի , և 'ի նմանէ է ձեզ
կեանք և շունչ . և դուք մոլորեալ
երկիրպագանիք կռոց մեռելո-
տեաց . վասն զի մոլորեցուցչ զձեզ
չար և անիծեալն սատանայ , և արկ
զձեզ 'ի կապանս և յորոգայթ մա-
հու , ունէք նովաւ երԹալ 'ի խա-
ւարն արտաքին , ուր լալ աչաց է և
կրճել ատամանց ։

Յայնժամ արտասուեալ Թագա-

ւորն ասէ. Ոչ է պարտ առնս այս-
միկ կեալ. և տարեալ զտուրքն Թա-
գէոս կապանօք արգելին 'ի գզեակ
պարսպին, ուր էին մարդակերք գա-
զանքն։ Իբրեւ արձակեցին երկու
առեւծք, և եկեալ անկանէին առ
ոտն և լեզուին զհոգսթափան ոսկց
սրբոյն, և ոռնային քծնելով։ Եւ
սրբոյն աղօթեալ լուծան կապանք
իւր։ Եւ նշանեալ ընդդէմ առիւ-
ծուցն գնացին յիւրաքանչիւր տե-
ղիս։ Իսկ անօրէն Թագաւորն առա-
ւել դրդռեալ 'ի չարէն հրամայեաց
լուցանել հնոց հրոյ և բորբոքեցին
յոյժ, և արկին զտուրբ առաքեալն
կապանօք 'ի նեղքս։ Եւ նա աղօ-
թեալ ասէր. Տէր Յիսուս Քրիս-
տոս հաս ինձ յօգնականութիւն. և
եղ յանկարծակի հոգմ ուժգին ամ-
պախառն ցօղով, և առ զհնոցն հրա-
խառն և արկ զանօրէն բարբարո-
սաքն։ Եւ ահ երկնաւոր ձայնիցն
կորոյս զամենեսեան։ Իսկ Թագա-
ւորն փախստական անկաւ յատա-
ռանս իւր, և չար հիւանդութեամբ
վարանեալ կայր 'ի տարակուսի։

խակ սուրբ առաքեալն եղեալ լի երկնաւոր յուսո

իմ լծակից և պաշտօնեայ տեառն.
և նա ուռուցէ ձեզ զբանս սուրբ
աւետարանին, զոր եգ 'ի բերան
նորա սուրբ Հոգին, և հաստատեալ
զձեզ 'ի հաւատս սուրբս փութով
հատանէ առ իս, կատարել զմար-
տիրոսական հանդէսն։ Եւ օրհ-
նեալ զնոսա գնացին։ Եւ հասեալ
բազում զօրականք իշխանաքն հան-
դերձ, և կալեալ զսուրբ առաքեալն
հանին 'ի փղքր ձորակէն տակաւ մի
'ի բարձրաւանդակ տեղի մի 'ի վե-
ճանմէջս։ Խակ սուրբ առաքեալն ա-
ղօթէր, և ասէր. Տէր Աստուած
հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, ընկալ զիս այժմ, և արա
զնչան ահեղ աստուածութեանդ,
զի գիտասցեն և ծանիցեն թէ գու
միայն ես Աստուած ամենայն արա-
րածոց. և այժմ ապաչեմ զքեզ, մի
թողուր 'ի ձեռանէ զվիճակս զայս,
և մի համարիր ոչինչ զայս մեզս, զի
ոչ գիտեն զինչ գործեն. փոխեա
զբարբարոս միտս սոցա, և արա սո-
ցա ճանաչել զքո աստուածու-
թիւնդ, մարգարէիդ և քաղքի տէր։

Եւ կատարեալ զպօղծան, և տեսա-
նողքեալ զինքն նշանաւ սուրբ խա-
չին, ասէ ցդահիճսն. Զինչ կամիք
արարէք։ Եւ յարուցեալ դահիճն
'ի վերայ արբոյն որով եհար զՋէ-
մենոս զերգեալն իւր և ատակեաց
զնա, որ էր իջեան 'ի վերայ ան-
նոյն Ճանապարհաց և հաւատարիմ
'ի գրան արքունի։ Իսկ սուրբ առա-
քեալն Իրրեւ եառեալ եղեալ մեռա-
ելն, տրտմեցաւ, զի էր գարմա-
նիչ հաւատացելոց, և ամենայն սա-
րսեալ ընդունող։ Եւ եկեալ սուրբ ա-
ռաքեալն առ մեռելն, հայեցաւ
յերկինս և ասէ. Հայր տեառն մե-
ծոյ Յիսուսի Քրիստոսի, հայեաց
յերկնից 'ի սուրբ աթոռոյ քում
մէ, և կենդանեացո զմեռելս զայս,
զի գիտասցեն եղեալ դու միայն ես
Աստուած. և բուռն եհար զձեռա-
նէ մեռելոյն, և ասէ. Բեղ ասեմ,
արի կաց յանուն Յիսուսի Քրիս-
տոսի որդւոյն Աստուծոյ։ Կանգնե-
ցաւ և յարեաւ, և անկեալ առաջի
ոտից սրբոյն ասէ. Հաւատամ յԱ-
ստուածն քո, զի դա միայն է Ա-

ասուած , և չէք այլ ոք , և եդ ձեռն
'ի վերայ վերացն և բժշկեաց զնա։
Եւ հաւատացին 'ի ժամուն ոգիք
եւթն հարիւր և քսան , և առաջնորդ
հաւատացելոցն էր Զեմենտոս՝ զոր
կենդանացոյց Քրիստոս 'ի ձեռն
սուրբ առաքելոյն։ Եւ ասէ սուրբ
առաքեալն ցԶեմենտոս . Ահա կեն-
դանացոյց զքեզ Քրիստոս , որդին
Աստուծոյ . և փրկեաց զքեզ 'ի հայ-
բենի մոլորութենէն , և արար զքեզ
արժանի երկնային լուսոյն , արդ
զորացիր և պինդ կաց 'ի հաւատն
Քրիստոսի , և նա պահեացէ զքեզ ,
և զամենայն հաւատացեալսդ։ Եւ
առեալ մկրտեաց զնոսա , և համ-
բուրեաց երկնային սիրովն , օրհ-
նեաց զնոսա և յանձն արար սուրբ
հոգւոյն , և ասէ . Երթայք խաղա-
ղութեամբ , տէր ընդ ձեզ։ Ապա
ինքն աղօթէր 'ի վերայ հաւատացե-
լոցն և ասէր . Տէր իմ Յիսուս , պա-
հեա զսոսա , և արա յամօթ զչարն ,
և զնս ընկալ տէր իմ։ Իբրեւ կատա-
րեաց զաղօթսն , և թագաւորն բար-
կացեալ հրամայեաց փութով ապա-

նանել զառաքեալն։ Եւ կատարե-
ցաւ 'ի նմին ժամու սրով։ Եւ 'ի
կատարել սրբոյն բուրեաց հոտ ա-
նուշութեան, և ձայն ահեղ սաստ-
կութեան, և ծագեաց լոյս յերկ-
նից 'ի վերայ սրբոյն, և եղեւ շար-
ժումն մեծ, և պատառեալ վիմին
ընկալաւ զսուրբ մարմին առաքելոյն
զօրութեամբն Աստուծոյ, և անօ-
րէնքն եղեն փախստականք։ Իսկ
հաւատացեալքն զօրանային 'ի լու-
սոյն Հառապայթիցն, և սուրբ առա-
քեալն Թադէոս էր 'ի մէջ նոցա իբ-
րեւ զլոյս։ Աղաղակեցին միաբան և
ասեն. Սուրբ առաքեալ Աստուծոյ
հայր մեր, յիշեա զմեզ և մի մոռա-
նար, զի կարծէին եթէ մարմնով
համբարձաւ։ Եւ յարուցեալ ինքն
'ի տեղի ոգանմանն, խմացան եթէ
սրով կատարեցաւ։ Եւ վիմին պա-
տառեալ ընկալաւ զսուրբ մարմինն.
ապա եղեալ յարտասուս լային, և
հաւատացին յաւուր յայնմիկ ոգիք
երեք հազար և չորս հարեւր և երե-
սուն և երեք ընդ այր և ընդ կին.
փառաւորելով զսուրբ Երրորդու-
թիւնն 'ի բարձունս։

Այս ՍԱՄՈՒԷԼ եպիսկոպոս անար-
ժան ծառայ Քրիստոսի, թարգմա-
նեցի զվկայութիւն սուրբ առաքե-
լոյն Թադէոսի, և զարքայ կուսին
Սանդխտոյ, և եռաս ամենայն Հայ-
ասատան աշխարհի 27։ Որք ընթեռ-
նուք և կատարիք զյիշատակ երկո-
ցուանց ընտրելոցն, արժանի համա-
րեսջիք յիշել զանարժանս 'ի սուրբ
աղօթս ձեր։

Կատարեցաւ սուրբ առաքելոյն
Թադէոս 'ի քաղաքս ամենայ երկրաս-
ատան, յինեներորդ ժամու, և սուրբին
Սանդուխտ յեւթն նորին ամենայն,
'ի փառս ամենասուրբ Երրորդու-
թեանն. ամէն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԵՒ ՍԱՆԴԽՏՈՅ ԿՈՒՍԻՆ

Սուրբ առաքեալն Թադէոս էառ զՀոգին սուրբ ընդ այլ առաքեալսն 'ի վերնատունն. և 'ի վիճակէն զաշխարհս 'ի վերայ որոց առաքելոց, ելհաս վիճակն Թադէոսի երթալ 'ի քարոզութիւն Հայոց ազգի. և Պետրոս վէմն հաւատոյ, որ էր գլուխ սուրբ առաքելոցն՝ էառ զգեզարդն ատուածամուխ իւր զէն Թադէոսի, օգնական և ժանդակ 'ի քարոզութիւն առաքելոյն։ Եւ նա առեալ զգեզարդն ատուածամուխ, և եկն յՈւրհա քաղաք առ Թագաւորն Հայոց և Աստոյ Աբգար, որպէս և խոստացեալ էր նմա

Բրիտոս, առաքել Հարտաբ բժիշկ
Աբգարու զմի ումն յաշակերտաց իւ-
րոց։ Եւ 'ի մոտանել առաքելոյն ա-
ռաջի Աբգարու՝ եռեռ արքայ նշան
ահեղ լուսոյ 'ի վերայ երեսաց Թա-
դէոսի, և Թադ ոսկի 'ի գլուխ նո-
րա։ Եւ զարհուրեալ արքայ անկաւ
'ի վերայ երեսաց իւրոց, և երկիր
եղաց Թադէոսի։ Եւ մատուցեալ
սուրբ առաքեալն Թադէոս եդ
ձեռս 'ի վերայ արքայի և բժշկեաց
զնա 'ի չար վերայ անտի ուրիշ-
Թեան։ Եւ քարոզեալ նմա զբանն
կենաց, և լուսաւորեաց զամենայն
քաղաքն Եդեսիայ, միրտուՀեամբ
սուրբ աւազանին. և շինեաց եկե-
ղեցիս և կարգեաց քահանայս և
սարկաւագունս։

Եւ ձեռնադրեաց նոցա եպիսկո-
պոս զԱդդէ կերպասագործ մի յա-
շակերտաց իւրոց. և ինքն Թղթովն
Աբգարու հրամանաւ Փրկչին և զն-
նու գեղարդին գայ յաշխարհս վե-
րին Հայոց առ Սանատրուկ արքայն, որ էր քեռորդի հաւատա-
ցեալ արքային Աբգարու. և հան-

գիսկեցաւ նմա 'ի գաւառն Արտա-
զու 'ի գեղջաքաղաքն Շաւարշան։
Եւ քարոզեաց անդ զբանն կենաց
և արար պանդխտիս մեծամեծս.
որով հաւատացին բազումք 'ի տէր
և մկրտեցան. և եկեալ գոլաւոր
Թագաւորին Սանատրկոյ, որոյ ա-
նուն էր Սանդուխտ՝ գեղեցիկ տես-
լեամբ և ազգով հաստակաւ. որ եկն
'ի գիշերի առ Թադէոս և լուաւ 'ի
նմանէ զքարոզութիւն աւետարա-
նին, և հաւատաց 'ի Քրիստոս և
մկրտեցաւ. և նշան 'ի յերկնից ե-
րևեցաւ 'ի վերայ տուրբ կուսին.
զոր տեսեալ բազմաց հաւատացին
'ի Քրիստոս։ Եւ լուաւ Թագաւորն
հրամայեաց որով կոտորել զհաւա-
տացեալսն. և մինչդեռ կամէին
ոգնանել զտուրբ առաքելոյն,
յանկարծակի շարժումն եղեւ, և
լոյս պայծառ ծագեցաւ անդէն.
յորմէ զարհուրեալ անհաւատքն
եղեն փախստականն և ոչ կարացին
մեռն արկանել 'ի տուրբ յառա-
քելոյն։ Եւ երեւեալ նմա տէր
Քրիստոս և ասէ ցնա. Քաջալե-

ուեաց Թագէոս, և ասին կաց զի ես
ընդ քեզ եմ։ Եւ զու համբերեսս
զի բաղումք ներգուեալք հասանե-
ցաց են քեզ, և ոչ ընդունին զքո
քարոզութիւնդ։ և որք կատարե-
ցան վասն անուան իմոյ, ես ասաց
նոցա տեղի՛ ի տան հօր իմոյ։ Ասէ
Թագէոս ցտէր։ Ցէր իմ՝, և ես փու-
թամ՝ հասանել՝ ի լոյս ասասուածու-
թեան քո։ Ասէ տէր։ Խնդա և ու-
րախ լեր, զի կատարեսցին կամք
հայրենեան քո։ և զայս ասացեալ
վերացաւ տէրն յերկինս։ Եւ՝ ի
փարատել լուսոյ Հառագայթիցն
առ տակաւ տակաւ հայեցեալ տեսին
զառաքեալն զի ազօթէր։ Եւ զօրա-
կանացն անկեալ առ ոտս առաքե-
լոյն գոգալով և ասէին։ Հաւատամք
յԱստուածն քո զոր գու քարո-
զես, և փարեցին զոտիւք սրբոյն, և նա
առեալ միրուեաց զնոսա։ Եւ յետ
այնորիկ եկին այլ զինուորք և կա-
լեալ զառաքեալն եդին՝ ի բանդի։
ընդ նմին և զԱնդրոնիա, և զայլ
ոմանս՝ ի հաւատացելոցն։

Եւ Թագաւորն Սանատրուկ մի-

առաքած հրամայեցաւ արքայն Սան-
դեղ զհաւատացեալսն։ Իսկ սուրբն
զայնմանս ասացեալսն, և հրամայեաց սրան-
դեղ զհաւատացեալսն։ Եւ նոքա
հայոց։ Եւ նոքա Թագաւորն
դա էր երկրորդ Թագաւորութեան
մեծին ոմն ընդ նմա էին։ Վասն զի
հարեալ ի Քրիստոս, և ա-
ռաքեալ զնոսա ձեռս եդեալ յորոց
ինա և հաստատեաց։ Եւ հաւատաց
մեծամեծն ի Քրիստոս։ Իսկ սուրբ
ամենայն տնքն ընդ նոսա։ Վասն զի
սրբոյն Սանդղեղ։ Եւ նոքա
ասացին զանունս նոցա։ Եւ սու-
տանեալ զանունս նոցա։ Եւ ասաց
մեծամեծն զանունս նոցա։ Եւ ասաց
դեղ ի բաց։ և մնաք եղեալ ոչ
դեղ ի բաց։ Եւ ասաց ցնոսա։ Ոչ
դեղ, որ եկեալ եղեալ զդրուն բան-
ասացեալ զանունս նոցա։ Եւ ասաց
ասացեալ զանունս նոցա։ Եւ ասաց
դեղ։ Եւ ասաց ցնոսա։ Ոչ ասաց
յորժամ։ յիշեր լայր զառնոսկն։
և ասաց։ Եւ ասաց զանունս նոցա։
զանունս նոցա։ և հրամայեաց սրան-
դեղ զհաւատացեալսն։ Իսկ սուրբ

դրխաց զապել զապանեալն և թա-
ղել։ Եւ սուրբն Սանդուխտ էա-
բերել կտաւս և գնացեալ հաւա-
տացելովք թաղել զերանելի նահա-
հատակն. զորս համբուրէր արտա-
սուօք սուրբն Սանդուխտ, և ամ-
փոփէր զնոսա պատանօք և տայր
թաղել։ Եւ դարձեալ 'ի բանդն
առ սուրբ առաքեալն և ազատէր
զնա զի ազօթեսցէ վասն նորա հա-
սանել նմա երանելեացն, և արժա-
նի լինել սրբոց պսակացն։ Եւ
սուրբ առաքեալն ասէ ցՍանդուխտ.
Երանի է քեզ սուրբ կոյս, հարսն
երկնաւոր փեսային, համբերեա
սակաւիկ մի և տեսանես զՔրիս-
տոս. և մինչ նա խօսէր զբանն կե-
նաց, ահա եկին զօրականքն 'ի թա-
գաւորէն և տարան զսուրբ առա-
քեալն կապանօք, և զորս ընդ նմա.
բայց զսուրբն Սանդուխտ ոչ կա-
պեցին։

Եւ իբրեւ կացուցին առաջի թա-
գաւորին կոչէաց զսուրբն Սան-
դուխտ առ ինքն և ասէր. Մօտ եկ
առ իս դուստր իմ գեղեցիկ Սան-

գուխա։ Իսկ նա ոչ ակամբ հայեցաւ
'ի նա 28 ։ Ասէ ալքայ. Ուրացար
զիս, ուրգեակ, և սիրեցեր զմոլորե-
ցուցիչդ զայդ։ Երդուեալ եմ աս-
տուածովքն, զի չարաչար մա-
հուամբ կորուսցից զնա և զքեզ։ Պա-
տասխանի էտ տուրբն Սանդուխտ և
ասէ. Այն զոր գու մոլորեցուցիչ
կոչես, նա զիս 'ի մոլորութենէ 'ի
լոյս ստուածգիտութիւն փոխեաց.
և ծանոյց զաէրն իմ Յիսուս Քրիս-
տոս զարարիչն երկնի, և ես փու-
թամ առ հայրն իմ Քրիստոս, որ
աէրն է տերանց և թագաւոր թա-
գաւորաց. և նա է լոյս ամենայն
արարածոց։ Ասէ թագաւորն. Ո՞վ
է նա զոր կոչես գու Աստուած և
արարիչ. ասէ տուրբն Սանդուխտ.
Աստուած է նա որ յոչնչէ արար և
հաստատեաց զերկինս և զերկիր. և
գուք խաւարեալ խորհրդով պաշ-
տէք զկուռս, որ ոչ տեսանեն և ոչ
լսեն, ոչ խօսին և ոչ հոտոտին, ոչ
գնան և ոչ շոշափեն, յորս բնա-
կեալ են դեւք և խաւարեալ կորու-
սանեն զմիտս ձեր. և առնեն զձեզ

որդիս գեհենին, ուր լալ աչքն ի կրձել ատամանցն անսպառելի է։

Յայնժամ սրտմտեալ Թագաւորն, եւ հրաման կապել զձեռս 'ի յետս, և հարկանել անչափ ի ուրացի զՔրիստոս։ Եւ մատուցեալ դահճացն կապեցին զսուրբն Սանդուխտ, և կամէին քարշել և հարկանել։ Իսկ սուրբ առաքեալն յարտասուս հարեալ ասէր. Տէր իմ Յիսուս Քրիստոս, հայեաց յաղախին քո, և զօրացո զսա կալ ընդդէմ չարին հնարիցն, և արա յամօթ զհակառակորդն ճշմարտութեան։

Եւ մինչդեռ չարչարէին զսուրբն Սանդուխտ, յանկարծակի եղեւ շարժումն յերկնից, և ձայն ահագին որ ասէր. Քաջալերեաց գուսպերդ, պինդ կաց և մի երկնչիր, զի ես ընդ քեզ եմ։ Եւ առժամայն լուծան կապանք նորա, և խաւարեցան դահիճքն 'ի լուսոյ պայծառութենէն որ փայլեաց շուրջ զկուսին, և ահ կալաւ զամենեսեան հանդերձ Թագաւորաւն. և սուրբ կոյսն Սանդուխտ էլ արտաքս փու-

թանակի և գնաց առ սուրբ առաքեալն Թադէոս և փարէր զոտիւք նորա և ասէր. Ահա եհաս տէր Յիսուս Քրիստոս յօգնականութիւն ինձ, և արձակեաց զիս 'ի կապանաց անտի, և յամօթ արար զսատանայ և զարբանեակս նորա։ Եւ սուրբ առաքեալն Թադէոս գոհանայր զԱստուծոյ և տայր քաջալերութիւն սրբոյն Սանդխտոյ։

Յայնժամ դայր հասանէր իշխանն ոմն հրամանաւ Թագաւորին, և սնկեալ արտասուօք առ ոտս առաքելոյն և ասէր. Յղեաց առ քեզ Թագաւորն և ասէ. Մեղայ քեզ և Աստուծոյն քո, թող մեզ և աղօթս արա վասն մեր, զի անցանէ զմեք սատակութիւնբարկութեանս զի կորնչիմք աւասիկ. արդ զինչ և կամիս դու արասցուք։ Իբրեւ լուաւ զայս սուրբ առաքեալն՝ յարտասուս եղեալ աղաչեաց զԱստուած։ Եւ առժամայն դադարեաց շարժումն, և եղեւ խաղաղութիւն, և լուծան կապանք նոցա և լռեցին ձայն ահեղ որոտմանցն։ Յայնժամ

հաւատաց Իշխանն ամենայն տամբ իւրով, և մկրտեցաւ, և կոչեցաւ անուն նորա Սամուէլ, և ոչ ոք էր նման նմա 'ի Թագաւորութեանս Հայոց։

Իսկ Թագաւորն գրգռեալ 'ի չարէն հրամայեաց բեւեռս հարկանել ընդ ոտս նորա, և նա այնպէս կատարեցաւ, և այլ եւս ոգիք եւթն ընդ նմա յաշակերտաց սրբոյն։ Եւ եղեւ նշան լուսոյ 'ի վերայ նոցա, և ահ մեծ անկաւ 'ի վերայ անօրինացն։ Իսկ սուրբն Սանդուխտ ելեալ 'ի գիշերի՝ հանդերձ ընկերօքն գնացեալ եբարձ զմարմինս նոցա, և պատեաց մանրուր կտաւօք զմարմինս նոցա, և թաղեաց 'ի փոքր ձորակին։ Եւ միսիթարէր զամենայն հաւատացեալսն բանիւ սուրբն Սանդուխտ, և կերակրէր զնոսա հացիւ, և զգեցուցանէր հանդերձիւ, և առնէր նշանս և արուեստս յանուն Յիսուսի Քրիստոսի։ Եւ 'ի վաղիւ անդր հաւատաց 'ի Քրիստոս կին ոմն անուն Զարմանադուխտ քարոզութեամբ սրբոյն Սանդրխ-

տոյ, և մկրտեցաւ ամենայն տամբն
իւրով, որք էին ոգեք երկու հա-
րեւր։ Եւ լուեալ Թագաւորն եւ
հրաման զՋարմանագուխան միայն
սպանանել. և բազումք 'ի կատար-
մանն Զարմանագխտոյ հաւատացին
'ի Քրիստոս վասն փայլման պայծառ-
լուսոյն՝ որ էջ 'ի վերայ Զարմանա-
գըխտոյ։

Եւ լուեալ Թագաւորին մրմռե-
ցաւ 'ի վերայ Սանգխտոյ և ասաց
սպանանել զնա. քանզի ասէր թէ
Նա մոլորեցուցանէ զամենեսեան. և
եկեալ կալան զնա և տարան 'ի տե-
ղի կատարմանն։ Եւ առեալ դա-
հիճն զսուրն զի սպանցէ զՍան-
գուխտ, և եհար զդահճապետն և
սպան զնա։ Իսկ անհաւատքն առա-
ւել գրգռեալ 'ի չարէն, դիմեցին 'ի
վերայ սուրբ կուսին Սանգըխտոյ,
և անդէն զնրար հարեալ սատակե-
ցին։ Իսկ սրբուհին Սանգուխտ
կայր 'ի մէջ նոցա և աղօթէր. Տէր
Յիսուս ընկալ զնս։ Եւ մի ոմն 'ի
զօրականացն հարեալ զսուրն 'ի
սիրտ կուսին Սանգխտոյ, և նա ան-

գէն աւանդեաց զՀոգին իւր առ Աստուած։ Յայնժամ բուրեաց հոտ անուշութեան, և ծագեաց լոյս 'ի յերկնից երբեւ զփէն հրոյ և եկաց 'ի վերայ մարմնոյն Սանդխատոյ զերիս տիւս և զերիս գիշերս. վասն որոյ հաւատացին 'ի Քրիստոս յաւուր յայնմիկ ոգեք երկու հազար ընդ այր և ընդ կին, և ոչ մեկնեցան 'ի տեղւոջէն. և եկեալ սուրբ առաքեալն Թադէոս մկրտեաց զամենեսեան յայնմ գիշերի. և առեալ զմարմին սուրբ կուսին եդ 'ի նոյն տեղւոջն, և արար զգերեզմանն յայտնի լոյս արգել շնորհօք 29։

Եւ աղօթեալ գնաց առ աշակերտսն սուրբ առաքեալն և մխիթարեաց զնոսա. և անդէն եկեալ հասին երկու իշխանքն և բազում ամբոխ ընդ նոսա. և կալեալ զԹադէոս ածին առաջի Թագաւորին. և հայեցեալ նոսա զնա Թագաւորն պայծառատեսիլ և յոյժ ահեղատես, և ոչ կարաց խօսել ընդ նմա խառնութեամբ. այլ ասաց նմա կակղաբար, թէ Ընդէր գոլացար զմիտս չքնա-

զագէզ գտանէրն իմոյ Սանդխատոյ։
Ասէ Թագէոս. Այո, էս գոզա-
ցայ զգուստրն քո 'ի խուստրոյին
գործոց և 'ի չար պաշտամանց ձե-
ռոց, և գրաւեցի զնա առ Քրիստոս
ծննդեամբ սուրբ աւազանին. և քո
կարծեալ սպանանելով զնա փոխե-
ցաւ 'ի մահուանէ 'ի կեանս։ Ընդ
որ բարկացեալ Թագաւորն էտ ար-
կանել զսուրբ առաքեալն առաջի
մարգակեր գազանացն, և եկեալ ա-
ռեւծքն անկանէին առ ոտս սրբոյն։
Իբրեւ տեսին զայն անօրէնքն լու-
ցին հնոց և բորբոքեցին յոյժ և ըն-
կեցին զսուրբ առաքեալն կապանօք
'ի ներքս։ Եւ նա աղօթէր և ասէր.
Տէր իմ Յիսուս, հաս ինձ յօգնու-
թիւն։ Եւ յայնժամ էլ հոգմ ուժ-
գին ամպախառն ցօղով լի, և առ ըզ-
հուրն բորբոքեալ և արկ զանհաւա-
տացեալքն. և ընդ նմին ձայն ահեղ
որոտմանց ասատիկ յերկնից և ա-
ստակեաց զբազումս. և Թագաւորն
անկաւ փախստական 'ի յապա-
րանան, և չարաչար տագնապաւ
կայր 'ի տարակուսի. և սուրբ առա-

քեալն Թադէոս եղեալ ամբողջ 'ի հրոյն։ Եւ հաւատացին յաւուրն յայնմիկ ոգեք ջրեքհարեւր և քառասուն և երեք, որք աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից։ Եւ սուրբ առաքեալն մինչեւ ցնոսա 'ի նմին ժամու, և աղօթեաց այսպէս 'ի վերայ նոցա. Տէր Յիսուս և Աստուած իմ, մի թողուր զժողովուրդս քո, այլ զօրացո զսոսա 'ի սէր սրբութեան քո, և զիս ընկալ 'ի հոս անուշից։ Եւ այնպէս օրհնեաց զհաւատացեալսն և յանձն արար Քրիստոսի։ Եւ ասաց նոցա. Արիք, երէք 'ի բարձր տեղին, և հայեցեալ տեսէք զկատարածն իմ։ Եւ ես ահա եւս ձեզ առաջնորդ զՋաքարիա սիրոյն Քրիստոսի. զի ինձ լծակից է և ձեզ պաշտօնեայ 'ի տէր։ Եւ նոքա օրհնեալք 'ի նմանէ երթին 'ի բարձրագոյն տեղին 'ի գլուխ գահաւանդակ գարին։ Եւ սուրբ առաքեալն կայր անդէն և աղօթէր. և ահա հասին լշխանքն բազում ամբոխիւ հրամանաւ Թագաւորին, և կալեալ զսուրբ

առաքեալն հանին 'ի փոքր ձորակէն
'ի բարձրաւանդակ տեղի մի 'ի վիմա-
մէջս։ Եւ առեալ դահիճն զսուրն
զի սպանցէ զառաքեալն և եհար
զեղբայրն իւր զՋեմենտոս և սպան
զնա, որ էր նշխան 'ի վերայ ամե-
նայն ճանապարհացն, և հաւատա-
ցիմ 'ի գրան ալքուենի. և էր յոյժ
ողորմած բարուքն և աղքատասէր,
գարմանիչ օտարաց և կարօտելոց։
Եւ սուրբ առաքեալն իբրեւ եառեալ
թէ մեռաւ այրն բարի, որամեցաւ
յոյժ, զի էր գարմանիչ հաւատա-
ցելոցն, և ընդունող օտարաց։
Յայնժամ եկաց սուրբն Թադէոս
մօտ առ մեռեալն, հայեցաւ յերբ-
կինս և ասէ. Հայր տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, հայեաց յերբ-
կնից 'ի սրբութենէ քումմէ, և կեն-
դանացո զմեռեալս զայս. զի գի-
տասցեն թէ դու ես Աստուած ա-
մենայնի, և տէր կենդանեաց և մա-
հու։ Եւ կալեալ զձեռանէ մեռե-
լոյն և ասէ. Քեզ ասեմ, արի կաց
յանուն Յիսուսի Քրիստոսի։ Եւ
նոյնժամայն յարուցեալ մեռեալն

անկաւ առ ոտս սրբոյն և ասէր. Հաւատամ յԱստուածն քո զոր դու քարոզես, զի նա միայն է Աստուած։ Եւ էդ զձեռն իւր Թադէոս 'ի վերայ նորա և ողջացոյց զնա։ Եւ հաւատացին 'ի Քրիստոս յաւուր յայնմիկ ոգիք հինգհարիւր և քսան. և առաջնորդ հաւատացելոցն էր Զեմենոս։ Եւ օրհնեաց զնոսա Թադէոս և համբուրեաց և յանձն արար Աստուծոյ հոգւոյն ասելով. Երթայք 'ի խաղաղութիւն, և տէր ընդ ձեզ լիցի։ Եւ լուեալ զայս Թագաւորն բարկացաւ և սատիպեաց ըզդահիճսն սպանանել զսուրբն։ Եւ նոյնժամայն բուրեաց հոտ անոյշ և ծագեաց լոյս պայծառ 'ի վերայ և եղեւ ձայն ահեղ և շարժումն մեծ։ Եւ պատառեալ վիմին ընկալաւ ըզմարմին սուրբ առաքելոյն 'ի նեղքս, և դարձեալ կնքեցաւ. և անհաւատքն եղեն փախստական 'ի լուսոյն։ Եւ եկեալ հաւատացեալքն տեսին զի ամփոփեալ էր մարմին սուրբ առաքելոյն, և հաւատացին յաւուր յայնմիկ անձինք երեքհա-

զար և չորս հարեւր։ Եւ էին նոցա վերակացու Զաքարիա և Զեմեն-առս։

Կատարեցաւ սուրբն Սանդուխտ 'ի գեկտեմբերի հնգետասան. և յետ ութ աւուր զսուրբ առաքեալն Թադէոս գլխատեցին։ Եւ 'ի կատարման ժամուն տեսին հաւատացեալքն զՀոգի առաքելոյն լուսապայծառ յերկինս վերացեալ, և կարծեցին թէ մարմնով վերացաւ և միտքան ազազակեցին. Սուրբ առաքեալ հայր մեր յիշեա զմեզ առ Քրիստոս։ Եւ ապա ելջեալ 'ի տեղի կատարմանն և տեսեալ զարիւնն և ծանեան զմարմինն 'ի վիմին ամփոփեալ և զՀոգին առ Աստուած վերացեալ. և հիացեալ փառս Աստուն Աստուծոյ։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՍԱՆԴԽՏՍՑ

ԴՍՏԵՐՆ ՍԱՆԱՏՐԿՈՑ ԱՐՔԱՅԻ

Աուրն Սանդուխտ էր դուստր Սանատրկոյ արքային Հայոց և էր կոյս. և 'ի քարոզել առաքելոյն Թադէոսի զբանն կենաց, նա յոժարութեամբ ընդունէր, և հաւատաց յԱստուած կենդանի որ ստեղծաւ զերկինս և զերկիր. և ցանկալի էր 'ի յահ և յերկիւղ, և ընդառ արքութեամբ. և 'ի գէպ ժամու երթեալ առ սուրբ առաքեալն լսել 'ի նմանէ զբանն կենաց, որով զիւր զանձն ապրեցուցէ 'ի պատրանաց բանսարկուին, և 'ի հայրենեացն մոլորութենէ. կալ հաստատ

տուն 'ի հաւատան, և 'ի փորձու-
թեանց զերծանել Քրիստոսիս։
Ասէ առաքեալն. Զգոյշ կաց, և
մարտիր զբարիոք մարտն որոյ նեղին
և լիցին զքեզ, զոր 'ի սրտի քում
զՔրիստոս, և կարդա բոլորով սրբ-
սիս քում զնա, և հասցէ քեզ յոգ-
նականութիւն, և զօրացուսցէ զքեզ և
յամօթ առնէ զհակառակորդսն քո,
և մի քաղցրացի քեզ սէր երկրային
և անցաւոր, որ այսօր է և վաղիւ
կորնչի, և ոչ եւս երեւի, այլ հա-
ւատով և յուսով և սիրովն Քրիս-
տոսի ամրացո զքեզ, և ոչ մերձեսցի
առ քեզ չարն, և ոչ կարիցեն հը-
նարք չարին գրգռել զքեզ 'ի յու-
սոյն յաւիտենից և յանեանց ուրա-
խութեանցն, յորս վայելեցուսցէ
զքեզ ընդ սուրբս և ընդ սիրելիս
անուան իւրոյ, 'ի ձեռն չարչարա-
նաց և տանջանաց՝ զոր ընդունելոց
էս վասն անուանն Քրիստոսի Յի-
սուսի և Աստուծոյ։

Եւ ահա յանկարծակի հասին
նախարարքն Հայոց բազում զօրա-
կանօք 'ի գուրան՝ ուր էր սուրբ առա-

քեալն Թադէոս. իսկ նա էլեալ գնայր ընդ մէջ նոցա, և նոքա ոչ տեսին. և բազում խնդիրք լինէին վասն սրբոյ առաքելոյն, և իբրեւ ոչ գտանէին, կալեալ զսուրբն Սանդուխտ, ասէն ցերանելին. Փոխանակ զի Թողեր զաստուածն և արհամարհեցեր զմեծ Թագաւորն մեր զՀայրն քո, և գնացեր զհետ Աստուծոյն քրիստոնէից, և եղեր Թշնամանք Հայոց աշխարհիս, վասն այսորիկ չարամահ սպանցուք զքեզ։ Իսկ սուրբն Սանդուխտ հայեցեալ յերկինս հանդերձ արտասուօք աղաղակէր և ասէր. Տէր Յիսուս Քրիստոս հաս յօգնականութիւն 'ի պատերազմիս որ նեղեն զիս. և զօրացո զիս 'ի ժուժկալութիւն պընդութեան նեղութեանս, մեռանել վասն անուանդ քո մեծի, և ընկալ և խառնեա զիս 'ի գունդս սրբոց քոց, և 'ի Թիւս այնոցիկ որք սիրեցին զքեզ և հաճոյ եղեն աստուածութեանդ քումբ. որոց փառաւորեալ են մահք իւրեանց առաջի քո տէրութեանդ։ Իսկ սուրբ առա-

քեալն մուտակից եղեալ քաջալերէր
զերանելին 'ի Քրիստոս Յիսուս. և
ասէ սուրբն Սանդուխտ. Հայր իմ,
մի թողուր զիս մինչեւ կատարեցից
զընթացս իմ: Ասէ սուրբ առաքեալն
ցերանելին Սանդուխտ. Պինդ կաց
և զօրացիր 'ի Քրիստոս Յիսուս,
և այժմ տեսանես զՔրիստոս առ
որ անձկացեալն ես. և անհաւա-
տիցն ոչ երեւէր սուրբ առաքեալն:
Յայնժամ տարան զերանելին 'ի
տեղն սպանմանն. ասէ ցայնոսիկ որ
տանէին. Համբերեցէք սակաւիկ
մի, զի կացից յաղօթս առ Ա-
ստուածն իմ և տէր. և հայեցեալ
յերկինս հանդերձ արտասուօք, և
ասէ. Հայր երկնաւոր սիրելի որդւոյ
քոյ Յիսուսի Քրիստոսի տեառն մե-
ղոյ և փրկչի, հայեաց յերկնից 'ի
որբուութենէ քումմէ, և արա առ իս
զգուութ մարդասէր շնորհացդ քոց,
և ընկալ զոգիս քո յանուն որ-
դւոյ քո սիրելւոյ 'ի հոգ անուշից,
և արա զիս արժանի երկնաւոր լու-
սոյ աստուածութեանդ քոյ վայե-
լեալ յանապատ և յանվախճան և

յաւիտենական բարին, զոր խոստացար սիրելեաց քոց, որ կայ պահի յուսացելոց որ յաւիտենից։ Եւ հրաժարեալ 'ի սրբոյ առաքելոյն ընկալաւ զօրհնութիւն. և մատուցեալ 'ի տեղի հանդիսին ասէ. Արիք կատարեցէք զկամս հօրն ձերոյ սատանայի. և մատուցեալ ինքնին կամաւորութեամբ զպարանոցն, և ձգեալ զսուրն դահճին կամէր սպանանել զսուրբ կոյսն. և եհար ըզդահճապետն և սպան զնա. իբրեւ տեսին բարբարոսքն առաւել զայրացեալ 'ի չարէն՝ առեալ զսուրսն դիմեցին 'ի վերայ նորա, և անդէն հարեալք զիրեարս սատակէին։

Իսկ սուրբ աղախինն Քրիստոսի կայր յաղօթս և ասէր. Տէր Յիսուս Քրիստոս ընկալ զիս 'ի յարկագ յաւիտենից. զի ցանկամ ելանել 'ի մարմնոյս և մտանել առ Աստուած, և ժառանգել զանպատում բարին. և ուրախ եմ ընդ չարչարանս և ընդ մահս, որ վասն անուանդ քո. զի փառաւորեսցի անուն քո, որ զօրացուցեր զիս յաղթել ոչք մար-

տեան ընդ իս, զի քո է յաղթու-
թիւն, և քեզ վայել է փառք յա-
ւիտեանս։ ամէն։

Եւ նոյնժամայն պատանի ոմն է-
հար զկուրծս երանելւոյն Սան-
դըխտոյ սուրբ կուսին, և էլ արիւն
և բուրեաց հոտ անուշութեան, և
անդէն աւանդեաց զհոգին իւր
առ Քրիստոս բարի խոստովանու-
թեամբ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ
Հոգին. և ծագեաց լոյս յերկնից
իբրեւ զսիւն լուսոյ և եղեւ շար-
ժումն. և ձայն ահեղ երկնաւոր
զորաց որք օրհնէին զԱստուած, և
եկաց սիւն լուսոյն զերիս տիւս և
զերիս գիշերս 'ի վերայ սուրբ
մարմնոյն. և հաւատացին յաւուր
յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք
ընդ այր և ընդ կին. և ոչ մեկնեցան
'ի տեղւոջէն ուր մարմին սրբոյն
Սանդխտոյ կայր։ Եւ եկեալ սուրբ
առաքեալն 'ի գիշերի մկրտեաց զնո-
սա յանուն Հօր և Որդւոյ և Հո-
գւոյն սրբոյ, և առեալ զմարմին
սրբոյ կուսին Սանդխտոյ եդին 'ի
նոյն տեղւոջ, և արար անեղբեւոյթ

զՀանգիստ Երանելւոյ սուրբ տի-
կնոջն Սանգիստոյ. որ վկայեացն 'ի
քաղաց ամենայ յեւթն կատարեալ
վկայութեամբ 'ի Հայր և յՈրդի և
'ի սուրբ Հոգին. որոյմ փառք յա-
ւիտեանս. ամէն։

ԳԻՒՏ ԵՎ ԽԱՐԱՑ

ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

ԵՒ ՍԱՄՈՒԵԼԻ ԵՒ ԻՍՐԱՑԵԼԻ

ԵՒ ԱՑԼՈՑ ՈՐ ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿՍ

ԿԱՑԻՆ ԾԱՆԿԵԱԼ

ԵՒ ԷԻՆ ԱՄԲՈՂՋ .

ԵՒ ՑԱՑՏՆԵՑԱՆ ԱՌՆ ՈՒՐՈՒՄՆ

ՃԳՆԱՒՈՐԻ ԵՒ ՍՓԱՆՁԵԼԱՏԵՍԻ

ՈՐ Ի ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԵԱԼ ԷՐ

ԱՐԺԱՆԱՒՈՐ ԿԱՐԳՕՓ

ԿԻՒՐԱԿՈՍ ԱՆՈՒՆ

Ա.ՐԴ սկսեալ նորա պատմել և ա-
սէր 30 . Եւ Կիրակոս էի աշակերտեալ Դաւթի միայնակեցի . բնակէի 'ի անապս լերին Սանասարուկ՝ 'ի յայրին , մօտ 'ի Շաւարշան . յերկրաւորացս հրաժարեալ և միայնացեալ բազում ամաց , և միով հանգերձիւ , հանապազ յաղօթս ։ Եւ յայտնեցաւ ինձ 'ի քուն գիշերի յայտնապէս տեսիլ հրաշալի , 'ի մէջ Սանասարուկ գաշտի , 'ի վերայ միոյ փոքրիկ բլրոյ ծագեալ լոյս պանջելի , և 'ի մէջ լուսոյն աթոռ ոսկի , և 'ի վերայ աթոռոյն այր մի լուսաւոր , որ ոչ կարէի պատմել զնշան լուսոյն ։ Եւ կային շուրջ զաթոռուն այլ եւս հինգ այր լուսազգեաց . և ես հիացեալ և զարմացեալ կայի ։ Եւ յանկարծակի 'ի մէջ լուսոյն երեւեցաւ ոգի մի

թագաւորաձն, և երեսք նորա իբ-
րեւ զարեգակն, և հանդերձս ոսկե-
հուռա զգեցեալ ունէր, և էր ար-
կեալ զիւրեաւ ծիրանիս և պսակ
հրաշալի 'ի գլուխ իւր, և եկն եկաց
առ լուսաւոր առնն որ յաթոռոյն
նստէր, և նա ասէր ցաղջիկն. Ու-
րախ լեր, սուրբ կոյս հարսն Քրիս-
տոսի: Եւ տեսի եւս այլ այր մի
աքանչելի երեսօք որ նման էր վար-
դապետին իմոյ Դաւթի, և ասէր
ցիս. Մի երկնչիր, այլ զօրացիր 'ի
Քրիստոս, զի ետ քեզ շնորհս և
երեւեցոյց քեզ լոյս մխիթարու-
թեան, արդ ունկն դիր և պատմե-
ցից քեզ: Աքանչելի լոյսն որ ե-
րեւեցաւն քեզ՝ շնորհք Հոգւոյն
սրբոյ է որ 'ի վերայ սրբոցն ծա-
գեալ լուսաւորէ, և ոչ հեռանայ
յարդարոցն 'ի Հոգւոցն և 'ի մար-
մնոցն, և երեւի արժանացելոց որ-
պէս և այժմ քեզ: Արդ որ նստի 'ի
յաթոռն ոսկեղէն, նա է առա-
քեալն Թադէոս, և հինգ աւրքն լու-
սազգեացք զառաջեաւ՝ նոքա են ա-
շակերտք և վկայք նորա, և աղջիկն

Սանդուխտ է։ Եւ ես երկիւղիւ ա-
սեմ. Եւ ո՞ր տէր իմ. և ասէ. Ին-
քեանք ցուցցեն. և ես էի զարմա-
ցեալ. և յանկարծակի զարթոյց
զիս, և փառաւորեցի զԱստուած
վասն տեսլեանն և խնդրէի զստոյգն։

Եւ յերրորդում աւուր երեւէր
ինձ սուրբ առաքեալն Նովին կեր-
պարանօք, և իմ տեսեալ զնա յեր-
կիր կործանեցայ, և բուռն հա-
րեալ կանգնեաց զիս և ասէ. Մի
երկնչիր Կիրակոս, միտ դիր և ցու-
ցից քեզ զնշխարս մեր ուր հանգու-
ցեալ են։ Եւ եցոյց ինձ արձան մի
անտաշ յարեւելից կողմանէ, և ա-
սէ. Ասա գտանես. և յերկիւղէն
զարթեայ։ Եւ կայի 'ի պահս պըն-
դուլթեան զաւուրս երեսուն, և
արտասուագոչ աղօթիւք հայցէի։
Եւ յաւուրն երեսներորդի մատու-
ցի պատարագ և հաղորդ եղէ խոր-
հրդոյն, և գոհացեալ անցի յատա-
ցեալ տեղին՝ միայն, և գտի զար-
ձանն և բրեցի առ Նովաւ և ոչ ինչ
գտի, և 'ի տրտմութենէն նիրհեցի։
Եւ դարձեալ տեսի զառաքեալն

ասուրբ ընկերոջն առաւել եւս հրաշալի, և ասէ. Մի երկնչիր Կիրակոս, յառաջակայ կողմն բրեա և գտանես։ Եւ զարթեայ և բրեցի և գտի զնշխարս վկայի միոյ, և բուրեաց հոտ անուշութեան. և ես կարծէի թէ ինքն առաքեալն էցէ, և փառաւորեցի զԱստուած։

Եւ 'ի նմին գիշերի երեւեցաւ ինձ պատանի մի բարձր հասակաւ և գեղեցիկ երեսաք և լուսաւոր յոյժ և ասէ ցիս. Կերակոս, որ տեսերդ՝ Իսրայէլ է, և որ 'ի վերայ դորա՝ ես եմ Զաքարիա 31, և գիր 'ի վերայ խրաքանչիւրումն է, և արձանդ որ ընդդէմ կայ՝ անդ գտանես զառաքեալն։ Եւ թուէր 'ի տեսլեանն թէ պատառէր արձանն և ծագէր լոյս, և զարթեայ 'ի լոյս տեսլեանն և 'ի հոտ անուշութեանն. և գիր ոչ էր։ Եւ 'ի միում գիշերի տեսի զԱնգուխտ ըստ առաջին տեսլեանն և առաւել եւս պայծառ. և իմ զարհուրեալ յոյժ, և նա բուռն հար և կանգնեաց զիս, և հրամայեաց ինձ 'ի տեսլեանն՝ տա-

պատ մի տարածել և զնշխարան 'ի վերայ գնել. և արարի զհրամայեալն, և յանկարծակի լուցան և նշխարքն իբրեւ զջահս, և ես զարհուրեալ կայի. և նա զօրացուցանէր զիս և ասէր. Մի երկնչիր։ Եւ ասեմ. Ահա այրի տապատոդ։ Եւ նա ասէ. Ոչ այրէ, այլ ահա սրբէ և լուսաւորէ, և հաւատացելոց միխիթարութիւն բժշկութեան մատուցանէ և ընծայէ։ Եւ տեսանէի և ահա կանգնեցան և եղեն որպէս իւրաքանչիւր կերպարան՝ լուսաւոր և զարմանալի. և Սանդուխտ կայր 'ի միջի լուսաւոր տեսլեամբ. և ասէր մի ոմն ցՍանդուխտ. Ուրախ լեր հարան Քրիստոսի, զի 'ի ձեռն քո շնորհեցան նշխարք մեր 'ի բժշկութիւն հաւատացելոց և 'ի միխիթարութիւն, և յայսմանէ լեցի սոցա նահատակութիւն մեր և սէրն որ 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին։ Եւ կոյսն փառաւորէր զԱստուած և ասէ ցիս. Ես 'ի բլրին եմ՝ ուր զառաջինն ցուցաւ քեզ տեսիլն. և տարաւ զիս 'ի բլուրն և

ցուցանէր ինձ եկեղեցի մի փոքրիկ և
լի լուսով։ Իսկ վերին լոյսն անպա-
տում է ուր բնակութիւն սրբոցն
է. արդ զորացիր և կատարեա ըզ-
հրամայեալսն քեզ։

Եւ իմ յարուցեալ փառաւորեցի
զՔրիստոս և պահեցի պնդու-
թեամբ 'ի մարերի ամսոյ մինչեւ 'ի
նաւասարդի ամիս, և եկեալ պատ-
մէի եպիսկոպոսին 32, և բազում
փութով խնդրեալ զտեղին ոչ գտա-
նէր զտեղեաջլին։ Եւ գարձեալ երե-
էր ինձ նոյն լուսաւոր կերպարանք
սուրբ առաքեալն և ասէ. Այսօր
գտանէք զփափաքելին ձեր։ Եւ
տանէր զիս 'ի տեղին և ցուցանէր և
ասայր զգուշութիւն տեղւոյն։ Եւ
յարուցեալ առի ընդ իս քահանայ
զոմն Սամուէլ անուն, և հասեալ 'ի
նշանաւոր սրբոցն հանդիսա՝ ազ-
թիւք խնդրեցաք յԱստուծոյ ար-
ժանի լինել նշխարացն։ Եւ եղեւ
ահ և թնդիւն և պատառեցաւ վէմն,
և հոտ անուշութեան բուրեաց և
ելից զվայրն։ Եւ գտաք զնշխարսն
յիւրաքանչիւր հանդամի ահաւոր և

սքանչելի տեսլեամբ. առաջինն՝ ա-
ռաքեալն որ կայր 'ի մէջ պատա-
ռեալ վիմացն յարեւելից կողմանէ
որպէս երեւեցաւն. և մօտ յառա-
քեալն գտաք զնշխարս որոց նշանն
այս էր. միոյն ընդ ուսն հարեալ
երկաթի բեւեռս և 'ի նմին կային
բեւեռքն. և միւսումն ընդ լսուն
ծակեալ, և էին զարմանալիք 33 :
Եւ մեր ահիւ ժողովեալ զնշխարսն
փառաւորեցաք զԱստուած :

Եւ յերրորդում աւուրն հասաք
'ի հանգստարան սրբոյն Սանդխտոյ
և աղօթեցաք, և եղեւ շամանդաղ
թանձրամած 'ի վերայ բլրին մինչեւ
յերիս ժամն աւուրն, և ոչ կարա-
ցաք տեսանել ինչ. և ահիւ և լա-
լով խնդրեցաք զփափագելին, ա-
պա ուրեմն կարացաք տեսանել 'ի
բլրին լոյս, և 'ի մէջ լուսոյն բազ-
մութիւն լուսազգեաց մարդկան զի
փայլէին : Եւ բացեալ հանգիստ
սրբոյն և հոտ անուշութեան բուրեալ, և փարատեցաւ շամանդաղն
և եղեւ լոյս և երեւեցան նշխարքն,
և առեալ բերաք 'ի տեղին ուր նիշ-

խարք սուրբ առաքելոյն էին, և ե-
գաք առ նմա։ Եւ 'ի գիշերին յայն-
միկ եղեւ լոյս յերկնից 'ի վերայ
նշխարացն և ձայն օրհնութեան՝ որ
հրաշալի և քաղցր բարբառով օրհ-
նէին զԱստուած և զմիմեանս ողջա-
գուրէին, և նշխարք ոսկերաց նոցա
թռուցեալ առ միմեանս հանդէին.
և մեք զարհուրեալ կայաք հիա-
ցեալ, և տեսաք զնշխարս Սանդրխ-
տոյ զի էին 'ի մէջ նշխարաց առա-
քելոյն, և մեր երկիւղիւ մատու-
ցեալ զատուցանէաք 'ի միմեանց. զի
որ մերձենայցէ, գիտասցէ զնշխարս
առաքելոյն և Սանդխտոյ. և օրհնե-
ցաք զԱստուած ցնծութեամբ։

Եւ էլ համբաւ զսրբոցն յայտ-
նութենէ ընդ աշխարհս Հայոց, և
բազում ժողովք լինէին 'ի հռչակ
սրբոցն և տօն ուրախութեան կա-
տարէին ահիւ տեառն։ Եւ բժըշ-
կութիւնք լինէին եկեղոցն՝ դիւա-
հարաց, կուրաց, խլից, անդամա-
լուծաց, գօսացելոց, բորոտաց և
ամենայն ախտաժետաց 'ի ձեռն
սուրբ նշխարացն 'ի փառս Ա-
ստուծոյ։

Յայսմ ժամանակի ոմն 34 ՅՈՒԸՇ-
տուներաց կոյր 'ի ծնէ, որ էկեալ էր
'ի բժշկութիւն և ընկալաւ զլուսա-
ւորութիւն, և պատմէր սքանչելի
տեսիլ, որ երեւեալ էր նմա և ասէր.
Տեսանէի 'ի տեսլեան գիշերի աղջիկ
մի գեղեցիկ տեսլեամբ և ասէր. Ես
եմ Սանդուխտ. արի և գնա 'ի գա-
ւառն Արտազ 'ի քաղաքագեւղն
Շաւարշան, 'ի գաշտն Սանատրուկ,
'ի կայս հանգստեան մերոյ, երթ
կաց անդր և խնդրեա 'ի տեառնէ և
լուսաւորեացիս 'ի ձեռն սուրբ ա-
ռաքելոյն և նորին աշակերտացն, և
ես ընդ նոսա. և գիւղուք զձեռս մեր
'ի վերայ աչաց քոց և բժշկիս ա-
նուամբ Երրորդութեանն։ Եւ ա-
սէր սուրբն Սանդուխտ. Ահա տես
զգոյշ կաց և արասցես զհրամայ-
եալսն քեզ հաւատովք։ Եւ իմ
զարհուրեալ ահիւ և հաւատով և
յուսով, և էկեալ զհրամայեալսն
ինձ արարի. և բացան աչք իմ, որ-
պէս հրամայեաց ինձ 'ի տեսլեանն
Սանդուխտ շնորհօք տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի։ Եւ ասէր

բժշկեալն՝ թէ տեսանէի յորժամ
եկին՝ այր մի լուսաւոր և զնոյն աղ-
ջիկ հրաշալի և սքանչելի երեւմամբ
և ունէին գաւազան ոսկի, և եդին
զձեռս իւրեանց հանդերձ գաւա-
զանաւն 'ի վերայ աչաց իմոց, և առ-
ժամայն բացան և տեսի լոյս և փա-
ռաւորեցի զԱստուած։ Եւ եղեւ
նշանս այս առաջի ամենայն ժողո-
վրդեանն որ եկեալ էին 'ի լուր
սքանչելեացն։ Եւ այլ եւս բազումք
բժշկեցան 'ի բազում ախտից։

Եւ եղեւ գիւտ նշխարացն 'ի
շնորհաց սուրբ Հոգւոյն յաւուրս
հոգէզարդ, աստուածասէր և ճշգ-
նազգեաց տեառն Յովհաննու
Հայոց կաթողիկոսի, և քաջանուն և
նախանձախնդիր աստուածային պա-
տուիրանացն Վահանայ Մամիկո-
նեանից տեառն Հայոց մարզպանի և
սպարապետի. որք եկին աշխարհա-
խուռմբ բազմութեամբ եպիսկոպո-
սաք, քահանայիւք, և սարկաւագաք
և այլ բազմութեամբ աղաստաց և
խառնիճաղանճ ամբոխիւ, և տօնե-
ցին սաղմոսիւք և օրհնութեամբ

զիշատակ սրբոցն բազում աւուրս և ուխտ եդեալ կատարեալ զիշատակ նոցա։ Եւ առնուին մասն 'ի նշխարաց սուրբ առաքելոյն Թադէոսի և Սանդխատոյ և յայլոց վկայիցն, և տուեալ փառս Աստուծոյ գնացին յիւրաքանչիւր տեղիս խընդութեամբ։

Արդ որք հաւատով և սրբութեամբ փափագեն սուրբ և երկնաւոր գանձուց նշխարացն սրբոց՝ որք նահատակեցան վասն Քրիստոսի, ընկալցին զփափագելի լոյսն յաւիտենից և ծագեսցի 'ի վերայ նոցա՝ արեգակն արդարութեան, և խնդրուածք նոցա կատարեսցին 'ի տեառնէ բարեխօսութեամբ սրբոցն. և հասցեն մասին ժառանգութեան սրբոցն, 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 . ՅՕՐ . Դիպարագոնդ Բանակօտ . իսկ 'ի միւսում օրինակի և յերկաթագիր Տօնականին Բարի-զեան . Դիպաւոր գոնդ Բաժակօտ :
2 . Բ ՕՐ . պէրական . . . լապպէրօտ :
3 . Բ . արպասուագոլ :
4 . Բ . հաճոյական :
5 . Բ . հրէշտակախումբ :
6 . Բ . վէրադիպակ :
7 . Բ . Բաժակին :
8 . Բ . ղոսանլէլի նշանացն :
9 . Բ . յաւելուա՝ յշէաց և կոլէաց ընա :
10 . Բ . յամենայն գործս Բարիս :
11 . Բ . համաշխարհապա :
12 . Բ . ղպապկէրս : Բայց թագէի աստուածընկալ շրթանցն վայելչագոյնք՝ ըստ բնագրիս , հրեղէն համբոյրք կապանացն , որ զողջախոհ տատրակն Քրիստոսի

պարտաւանդեալ պրկէին։ Քանի՛
վասնզ և սիրալիք այս ապրպա-
տանք առաքելոյն Քրիստոսի։

13 · Բ · Ի սէրոյ նորա։

14 · Բ · Ուրիշեալ իմ։

15 · Բ · Ուրիշեալս։

16 · Պիսիդոնին թէ ասա զինեպտու-
նոս խնամացուք՝ ոչ նա մայր աս-
տուածոց, այլ եղբայր Ճանաչի դի-
ցահօրն Աբրամազդայ · քայց թուի
թէ զնոյն ինքն յԱբրամազդ կամէր
ասել · զի և ասորեւ Սանատրուկ
յիշէ զնոյն ընդ Ինահտայ։

17 · Բ · Լոան ցնորեցեալն Սանդիրոյ։

18 · Բ · Յղեալ ընդ ապիսրհոդը-
փայան։

19 · Բ · Խնդրեալ զնիկոլաբիանս։

20 · Բ · Ֆոտը մի։

21 · Բ · Ըստ տոյս անիրաւութեանն։

22 · Բ · Ղարբի անուն։

23 · Բ · Ասելոյն Քրիստոսի, մի երդ-
նուր, զի խորտեր ինչ երդնու։

24 · Բ · Կործեցին ամենեցուն խրնլել։

25 · Բ · Ամոյ ամենայն յաստուծոյ յերկրէս։

26 · Ամսեակս յօր · Ի միւսումն
պակասի։

27 . Սամուէլս այս՝ յայտ է թէ թալքմանեաց զվկայաբանութիւնս յառաջ քան զպատմագրել Խորոնեցւոյն . քանզի յիշէ սա այլոց յառաջ քան զինքն գրեալ զԹադէէ և Սանդխատոյ . իսկ զի ասէ՝ տուեալ զայն յընթերցումն ամենայն Հայաստանեայց , թուի թէ մեծաթոռ ոք էր եպիսկոպոսն , և գուցէ նոյն ինքն Շմուէլ ասորի , որ առ մեծաւն Սահակաւ կացուցաւ հակառակ նմին . եթէ գոյին 'ի նմա և այսպիսեաց բարեաց իրաց վոյթք :

28 . Թուի ընդ ոչխոմբ , կամ Ի ոչ ոչխոմբ :

29 . Այսպէս յՕր :

30 . Կամ յառաջաբան պատմութեանս պակասէ , կամ յերկայն պատմութենէ մասն հանեալ է : Ոչ է մեզ յայտ ոմ ի ցէ Կիրակոսդ և ոմ Դաւիթդ , Անյաղթն արդեօք թէ այլ ոք . և ոչ քաջ ստոյգ ժամանակ գիւտի նշխարացս , զորոյ քննութիւն տես յԱ. հատ . Պատմ . Հայոց , յ'էջ

584 : Իսկ բանք սորա երեւեցուցանեն առ Մանդակունեաւն Յովհ. և առ մեծաւն Վահանաւ լինել զգիւտդ, յամի տեառն 485 կամ 486 :

31. Զաքարիայդ աշակերտ Թադէի է, զոր նա լծակից իւր կոչէր. Թուի թէ և Խրայէլդ 'ի հեառեւոլաց նորին, զոր ոչ յիշէ պատմութիւնս :

32. Ի Յայսմաւուրս Շահակ կոչի եպիսկոպոսդ :

33. Ակնարկէ 'ի պատմեալսն յ'էջ 38 և 39 :

34. Յայսմաւուրք կին «ֆ» ասեն :